Azg Ազգ

18 ՅՈՒՆՈՒԱՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 7(4859)

ISSN: 1829-1651

Վանկանիշս վարկանիշիդ վնաս չէ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այս օրերին մամուլն ու մերձաղաքական շրջանակները քննարկում են ընտրությունների գնացող կուսակցությունների համամասնական ընտրացուցակների հարցը: Առանձին ցուցակների, քանի որ նախորդ օրը ԲՀԿ ներկայացուցիչը մի վերջին անգամ հայտարարեց, թե միասնական ցուցակների հարցը կարելի է փակված համարել՝ ԲՀԿ-ի օրեցօր աճող վարկանիշ, մեծացող ներուժ... Ի պատասխան ՀՀԿ շտաբին մոտ կանգնած աղբյուրը «այլ ուժերի վարկանիշի անկման» ֆոնին եւս ՀՀԿ-ի վարկանիշի աճ է արձանագրել՝ փոխանցելով, որ ՀՀԿ-ն, վերջ, որոշել է միայնակ մասնակցել թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական տեղերի պայքարին: Ի՞նչ կարելի ասել. ընդհանուր առմամբ սա մի ժամանակ է, երբ հիմնական ֆավորիտ ուժերի՝ փետրվարին կայանալիք համագումարներից առաջ, թղթով ու «պեչատով» որոշումներ կայացնելուց առաջ ընտրություններին մասնակցության ձեւի առումով, այժմ դեռ կարելի է (եւ հենց այդպես էլ վարվում են) զանազան լրատվական բաղիկներ լողացնել տարբեր ջրերում եւ տարբեր եղանակներով փորձել ազդել դիմացինի կայացնելիք որոշումների վրա:

Բայց եւ առավել հավանական է , որ քաղաքական ուժերի մեծ մասի դեպքում ընտրություններին առանձին գնալու որոշումը 80-90 տոկոսով մնալու է, եւ հրաժարվի պիտի լինի, որ այդպիսի որոշումը վերանայվի, քանի որ հատկապես ԲՀԿ-ն հավակնում է ներկա համամասնական եւ մեծամասնական մանդատներից շատ ավելին, ՀԱԿ-ի համար պետք է նեղ անենտեղ անեն, դե իսկ ՀՅԴ-ն, «Ժառանգությունը» («Ազատ դեմոկրատներով» հանդերձ) ապագա խորհրդարանում ներկայացված լինելու խնդիրը պետք է լուծեն իրենց հավակնություններին գոնե մոտ տարբերակով: Միասին եւ առանձին գնալու պլյուս-մինուսները հիմնական ուժերի դեպքում տրիվիալ են: Կոալիցիայի միասնական գնալը կարող էր բացառել արտախորհրդարանական ուժերի խաղերը նրանցից ամեն մեկի հետ, այն կապահովեր այնպիսի արդյունք, որի միասնական ձեռքբերումը թույլ չէր տա նրանցից յուրաքանչյուրին վիճարկել եւ բողոքել: Սակայն սպասվածից նվազ ձայների դեպքում, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը մեղքը բարդելու է մյուսի վրա: *Տես էջ 2*

Վարուժան Ներսեսյանը՝ նախագահի նոր օգնական

Նախագահ Սերժ Սարգսյանի երեկվա կարգադրությամբ Վարուժան Ներսեսյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախագահի օգնական: 2007-2009 թթ. Ֆլեցչերի դիվանագիտության եւ իրավունքի դպրոցում Ներսեսյանը ստացել է միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում, մինչ այդ լինելով ԵՊՀ շրջանավարտ միջազգայնագետ-պատմաբանի որակավորմամբ՝ ավարտել է նաեւ Հայաստանի կառավարման ակադեմիան:

Նախագահի արդեն ներկայիս օգնականը վերապատրաստվել է կանխարգելիչ դիվանագիտության եւ հակամարտությունների կարգավորման, սպառազինությունների վերահսկման եւ վերիֆիկացիայի գծով, նաեւ մասնակցել Վիեննայի դիվանագիտական ակադեմիայի եվրոպական կառույցների դասընթացին:

Մինչ Սերժ Սարգսյանի այս կարգադրությունը Ներսեսյանը զբաղեցնում էր ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանության խորհրդականի, առաջելության ղեկավարի տեղակալի պաշտոնը:

«Փակ շուկայի» խնդրով՝ վարչապետին եւ քաղաքապետին

Մի խումբ հասարակական կազմակերպություններ եւ քաղաքացիական նախաձեռնություններ երեկ նամակ են ուղարկել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին եւ քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ պահանջելով դադարեցնել Մաշտոցի պողոտայի փակ շուկայում սկսված շինարարությունը: Նամակում նրանք հիշեցնում են, որ կառույցը հուշարձանների պահպանման ցանկում է գտնվում, ճարտարապետական եւ ճարտարագիտական մեծ արժեք եւ պատմական նշանակություն ունի: Նրանք պահանջում են, որ Երեւանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդում լայն ու բազմակողմանի մասնագիտական քննարկման ներկայացվի նախագիծը, այդ թվում եւ հուշարձանի ներքին տարածությունում իրականացվող փոփոխությունները:

Օդի ջերմաստիճանը կնվազի 8-10 աստիճանով

«Հայթեսիիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ **Զարուհի Պետրոսյանից** տեղեկացանք, որ հանրապետությունում առաջիկա օրերին օդի ջերմաստիճանը կնվազի 8-10 աստիճանով: Հունվարի 19-ին եւ 20-ին առանձին շրջաններում սպասվում են ձյուն եւ ջերմաստիճանի կտրուկ նվազում թե՛ գիշերային, թե՛ցերեկային ժամերին:

Երեւանում հունվարի 18-ին սպասվում է փոփոխական ամպամածություն, էական տեղումներ չեն սպասվում, 18-ի երեկոյան, 19-ին, 20-ին ժամանակ առ ժամանակ սպասվում է ձյուն:

ԱՄՆ նախագահի թեկնածու. թերեւս եկել է Թուրքիային ՆԱՏՕ-ից վտարելու ժամանակը

Ամերիկյան Տեխաս նահանգի նահանգապետ, Հանրապետական կուսակցության կողմից նախագահի թեկնածու Ռիկ Փերրին «Fox News»-ի եթերում հունվարի 16-ին կազմակերպված բանավեճի ժամանակ հայտարարել է, թե թերեւս եկել է Թուրքիային ՆԱՏՕ-ից վտարելու, դուրս շպրտելու ժամանակը:

Ինչպես տեղեկացնում է «Mediaite.com» կայքէջը՝ հղում անելով «Fox News» հեռուստաընկերությանը, Փերրին եթերում նաեւ տվել է իր խոսքերի բացատրությունը, պարզաբանելով, որ Թուրքիան ղեկավարվում եւ ղեկավարվել է «շատերի ընկալմամբ՝ իսլամիստ-ահաբեկիչների կողմից»:

Ամերիկյան լրատվամիջոցները Փերրի հայտարարությունը մեկնաբանել են որպես «շատերի համար անակնկալ», քանի որ «Թուրքիան ԱՄՆ-ի երկարաժամկետ դաշնակիցն է ՆԱՏՕ-ում եւ կարեւոր դիվանագիտական գործընկերը՝ արաբական աշխարհում 2011-ի փոփոխություններն ուղղագծող կարեւոր, բայց քիչ քննարկված զարգացումների առումով»:

Հաղորդումը վարող Բրեթ Բայերի հարցին, թե արդյոք կարծո՞ւմ եք, որ իսլամիստ կառավարող իշխանությամբ, կանանց շրջանում սպանությունների բարձր ցուցանիշներով, խոսքի ազատության ոտնահարմամբ, ռազմական տարածաշրջանային խնդիրներով հանդերձ Թուրքիան առաջվա պես ՆԱՏՕ-ի անդամ է, Ռիք Փերրին պատասխանել է. «Երբ երկիրը ղեկավարվում է շատերի կողմից, իսլամիստ ահաբեկիչներ ընկալվողների կողմից, երբ նման գործողություններ են իրականացվում սեփական քաղաքացիների դեմ... ապա Միացյալ Նահանգների համար արդեն ժամանակ է ոչ միայն ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամության հարցի, այլեւ նրան տրամադրվող արտաքին օգնությունը զրոյացնելու քննարկման համար»:

Փերրին իր խոսքին ավելացրել է. «Թուրքիան շատ է հեռացել այն երկրից, ինչպիսին էր 1970-ականներին», երբ Փերրին որպես օդաչու ծառայում էր Թուրքիայում:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բեռլուսկոնիի «նացիստը»՝ Եվրոխորհրդարանի նախագահ

Եվրոխորհրդարանը նոր նախագահ է ընտրել՝ փոխարինելով այդ կառույցը ղեկավարած Եժի Բուզեկին: Նորընտիր նախագահ, գերմանացի սոցիալ-դեմոկրատ Մարտին Շուլցը Ստրասբուրգում կայացած ընտրություններում 670 ձայնից ստացել է 387-ը:

Եվրոխորհրդարանի 14-րդ նախագահը 1994-ից եվրոպական խորհրդարանի անդամ է, ընդ որում՝ 2004-ից գլխավորում է ԵԽ սոցիալիստներին: Նրա թեկնածությունը առաջադրվել էր նախորդ տարվա սեպտեմբերի 15-ին:

Շուլցի հետ կապված հայտնի է 2003-ի հուլիսի 2-ին Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիի հետ տեղի ունեցած միջադեպը, երբ Բեռլուսկոնիի տեղական քաղաքականության շուլցյան խիստ քննադատությանն ի պատասխան իտալացի վարչապետը ասել էր, թե Իտալիայում մեկը նացիստների համակենտրոնացման ճամբարների մասին ֆիլմ է նկարում, եւ Բեռլուսկոնին կարող է առաջարկել Շուլցին ճամբարի պարեկ-վերակացուի դերի համար: «Դուք հիանալի եք այդ դերի համար», ասել էր Բեռլուսկոնին:

Ու թեեւ հետագայում Բեռլուսկոնին տարբեր մեղայականներ ներկայացրեց իր խոսքերի համար, նացիստի հետ համեմատությունը որոշ ժամանակ Գերմանիայի եւ Իտալիայի հարաբերություններում դիվանագիտական հարց դարձավ:

Ա. Հ.

«Ո՞ւր մնացիր, ազերի եղբայր»

Ֆրանսիական օրինագիծը լռության մատնելու համար թուրքական թերթը ապերախտության մեջ է մեղադրում Ադրբեջանին

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Որքան էլ Թուրքիան եւ Ադրբեջանը համարվեն մեկ ազգի երկու պետություններ, նրանք նույնպես տարաձայնություններ ունեն: Օրինակ, հակառակ Անկարայի համառ պահանջներին, Ադրբեջանը շարունակ հրաժարվում է Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ անցագրային ռեժիմի կիրառումից: Մինչդեռ Թուրքիան այդ ռեժիմը երկու երկրների միջեւ վաղուց հանել է:

«Ազգը» բազմիցս անդրադառնալով թուրք-ադրբեջանական տարաձայնություններին, որոնք ժամանակ առ ժամանակ հակասությունների են վերածում, ինչպես վերաճել են Իսրայելի հետ հարաբերությունների հարցում, նշել էր, որ «Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ գործում է այն ժամանակ, երբ խնդրո առարկա են դառնում հայերն ու Հայաստանը:

Ինչպես երեւում է, կարգախոսի գործունեությունը սկսել է խաթարվել նաեւ այս պարագայում: Այլապես «Ենի շաֆաքը» երեկվա համարում չէր հրապարակի «Ո՞ւր մնացիր, ազերի՛ եղբայր» հոդվածը, որը թուրքական թերթի ինտերնետային տարբերակում ստացել է «Մեկ ազգ, երկու պետություն եւ ֆրանսամետ Ալիեւ» ձեւակերպումը:

Հոդվածի առիթը Ֆրանսիայի Ազգային ժողովում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումն է: «Ենի շաֆաքը» այս փաստին անտարբեր մնալու համար նախատում է Ադրբեջանին, նախատման հարցում թուրքական թերթին են միանում թուրք քաղաքական գործիչները:

Նրանցից «Մեծ միասնություն» կուսակցության նախագահ Մուստաֆա Դեսթիջին լռություն պահպանելու համար դատապարտելով Իլհամ Ալիեւի իշխանություններին, ասել է. «Օրինագծի հարցում ազերի ժողովուրդը պաշտպանում է Թուրքիայի դիրքորոշումը եւ ատելություն է դրսեւորում Ֆրանսիայի հանդեպ: Սակայն Ադրբեջանի վարչակարգը անտեսում է ժողովրդի կարծիքը: Մինչդեռ մենք ազերիներին կորցնելու մտավախությամբ հրաժարվեցինք բացել Հայաստանի հետ սահմանը: Ադրբեջանի ղեկավարությունը դա չի նկատում: Նա պետք է հայտարարեր, որ հակաթուրքական օրինագծի ընդունման դեմ կհակազդի Ֆրանսիային»:

Դեսթիջիին է միացել Ազգայնական շարժում կուսակցության փոխնախագահ Մուսաֆա Էրդեմը: Նա Ղարաբաղի, այսպես կոչված, օկուպացման համար տուժող կողմ համարելով Ադրբեջանին, նշել է. «Ֆրանսիական օրինագծով փորձ է արվում, որ տուժող կողմ դառնա նաեւ Թուրքիան: Եղբայրական երկու երկրներն էլ պարտավոր են միասնական դիրքորոշում դրսեւորել հայկական հարցում»:

Թուրքիա-Ադրբեջան միջխորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Նեջդեթ Ունուվարը հավելել է. «Ժխտողականությունը քրեականացնող օրինագիծը Ադրբեջանի համար նույնքան մտահոգիչ է, որքան Թուրքիայի: Ժամանակին Ալիեւը հավաստել է, որ Ադրբեջանը ՄԱԿ-ում եւ միջազգային այլ ֆորումներում համատեղ կգործի Թուրքիայի հետ»: *Տես էջ 8*

Պրեսկոտից ավելի շատ իշխանություններն էին գոհ

ԵՄԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի՝ Հայաստանի հարցով համազեկուցող Ջոն Պրեսկոտը երեկ դեռ Հայաստանում էր եւ մի քանի հանդիպում եւս ունեցել է: Ջոն Պրեսկոտին ընդունելով՝ նախագահ Սարգսյանը որոշակի դրական զարգացումներ է արձանագրել համագործակցության դաշտում ԵՄԽՎ համազեկուցողի հետ վերջին հանդիպումից հետո, Պրեսկոտն էլ իր կողմից կտրուկ տարբերություն է տեսել իր վերջին այցից հետո, դա մանավանդ ակնհայտ է եղել նրա համար Հայաստանի քաղաքական գործիչների հետ տեղի ունեցած հանդիպումների բովանդակությունից:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Սամվել Նիկոյանի հետ հանդիպմանը նա, ըստ ԱԺ կայքի, նշել է, թե Հայաստանում արձանագրվել են զգալի դրական փոփոխություններ եւ առաջընթաց՝ ներքաղաքական կայունությունն ապահովելու ուղղությամբ, ընդ որում՝ նա կարեւորել է այդ գործում ԱԺ դերակատարությունը: 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի առիթով հարուցված քրեական գործին եւս անդրադարձ է արվել: Հետաքրքրական է, որ Ջոն Պրեսկոտը առաջիկա խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ անդրադարձի ընթացքում նշել է, թե իր իրավասություններում չէ՝ ի՞նչ ընտրակարգով ընտրություններ կանցկացվեն Հայաստանում, մինչդեռ ընտրական օրենսգրքի փոփոխությունները տպավորիչ է գնահատել, դրական բաղադրիչներ է ասել՝ խոստումնալից:

Երեկ տեղի է ունեցել նաեւ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան-Պրեսկոտ հանդիպում, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են նաեւ մարտի 1-ի իրադարձությունների 10 զոհերի մահվան հանգամանքների քննությունը, առաջիկա խորհրդարանական ընտրությունների նախապատրաստման եւ իրավապահ համակարգի բարեփոխումների խնդիրները: ՄԻՊ գրասենյակի տարածած հայտարարության մեջ նույնպես նշվում է Պրեսկոտի դրական գնահատականը ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի վերաբերյալ Հայաստանում: Իսկ ահա Հայաստանի գլխավոր դատախազի (նաեւ՝ հատուկ քննչական ծառայության պետի եւ այլ պաշտոնատարների) հետ հանդիպման ընթացքում Պրեսկոտի խնդրանքով ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձել է 2008 թվականի մարտի 1-2-ին Երեւանում տեղի ունեցած դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով իրականացվող նախաքննության արդյունքներին՝ ներկայացնելով նախաքննության առջեւ ծառացած խնդիրները, ձեռնարկվող քայլերը:

Ա. Հովսեփյանը տեղեկացրել է, որ կատարած աշխատանքների վերաբերյալ նախաքննական մարմինը հրապարակել է տեղեկատվական հաղորդում, որը տեղադրվել է համացանցում՝ ապահովելով դրա հրապարակայնությունը եւ հասանելիությունը բոլոր շահագրգիռ անձանց՝ նշելով, թե դիտարկվող քրեական գործով նախաքննական մարմինն այսուհետ նույնպես նախաքննության արդյունքների մասին կշարունակի իրազեկել հանրությանը:

Իսկ նախորդ օրը Պրեսկոտի հետ հանդիպման ընթացքում ՀԱԿ համակարգող Լեւոն Ջուրաբյանն ու ՀԱԿ-ական Գագիկ Ջհանգիրյանն էին 2008 թվականի դեպքերի 10 զոհվածների վերաբերյալ ՀՔԾ զեկույցի բացթողումներին անդրադարձել:

Հետեւելով հանդիպումների ընթացքին՝ մենք տպավորություն ունեցանք, թե Ջոն Պրեսկոտի հետ հանդիպումներից առավել գոհ էին իշխանական շրջանակները, եւ դժգոհ՝ ընդդիմադիրները: Սակայն հազար թվից էլ պարզ է՝ եվրոպացիները սիրում են աշխատել կառավարությունների եւ իշխանությունների հետ, ձեռի հետ էլ լսում են ընդդիմադիրներին՝ ժողովրդավարության ցուցափեղկը պահելով:

Մ. Խ.

Վանկանիշս վարկանիշիդ վնաս չէ

1-ին էջից

Միասնական գնալու պարագայում առավել կարեւոր պետք է համարվեր արմատական ընդդիմության շանսի թուլացումը, ինչը, հիմա արդեն, կոալիցիոն ուժերի առանձին գնալու դեպքում մեծանալու է, քանի որ ՀԱԿ-ի մանեւրելու հնարավորությունն է ընդլայնվում. առանձին դեպքերում, ինչպես կայանալիք Հրազդանի կամ արդեն կայացած Իջեւանի քաղաքապետերի ընտրությունների դեպքում է, շանս կա համագործակցել կոալիցիոն ուժերից մեկի հետ, առավել ընդլայնելով առկա հնարավորությունները: Առանձին գնալու դրական-բացասականը համարյա հավասար են՝ առանձինի դեպքում խորհրդարանական բոլոր ուժերը հնարավորություն են ստանում իրենց իսկական վարկանիշն իմանալու (չնայած, անկախ զանազան քաղսոցիոլոգների ծառայություններից, չենք կարծում, որ բոլոր ուժերն իրենց իսկական վարկանիշը չիմանան): Ամբողջ խնդիրն այն է, որ այդ վարկանիշն ուռճացված կլինի այնքանով, որքանով այդ ուժերն իրենց ձեռքի տակ վարչական ռեսուրս կունենան: Սակայն կա բավականին մեծ լուֆթ, երբ հիմնական խոշոր կուսակցություն ՀՀԿ-ի քաղաքականությունից դժգոհները իրենց ձայնը տան այլ կուսակցության, դա կարող է լինել ինչպես ԲՀԿ-ն, այնպես էլ ընդդիմադիր միավորները: ՀՀԿ-ի համար սա է մինուսը, բայց պլյուսն էլ այն է, որ ընտրական բոլոր հանձնաժողովներում ՀՀԿ-ն բացարձակ մեծամասնություն է (ընտրությունների արդյունքներն, ի վերջո կախված են հաշվողներից) եւ նրա տիրապետած ռեսուրսն ի վերջո ԲՀԿ-ի տիրապետած վարչական ռեսուրսից այս իմաստով մեծ է: Այնպես որ սողացող գործընթացները էլի կարող են դինամիկան ուղղորդել, ինչը կարող է տանել նրան, որ բոլոր քաղաքական ուժերը, եւ հատկապես այս երկու մեծերը, համամասնական եւ մեծամասնական մանդատների համար կենաց ու մահու կռիվ կմղեն, իսկ այս ընտրությունների բացասական մթնոլորտը շատ ավելի շիկացած կլինի բոլոր նախորդներից ոչ թե միայն իշխանություն-ընդդիմություն ֆորմատով, այլ՝ իշխանություն-իշխանություն-ընդդիմություն: Հատկապես մեծամասնական տեղերը ՀՀԿ-ն չի ուզելու զիջել, իսկ ԲՀԿ-ն ամեն ինչ անելու է այժմ տիրապետած 6 թե 7 մեծամասնական մանդատը գոնե կրկնապատկելու համար, իսկ եթե նկատի ունենանք, որ այլ, այդ թվում ընդդիմադիր կուսակցություններից եւս մեծամասնական կարգով մի քանի հաղթողներ կարող են լինել, ուրեմն հասկանում եք, թե ի՞նչ է սկսվելու արդեն մարտի կեսերից Հայաստանում:

Քիչ բան կախված չի լինելու նրանից, թե ովքեր են լինելու քաղաքական ուժերի համամասնական ցուցակների առաջին եռյակում, կամ ո՞վ կգլխավորի ցուցակը: Եթե ինչպես Արեւմուտքում է, դրանք գլխավորեն կուսակցության նախագահները, ապա ՀՀԿ-ի դեպքում մի փոքր խնդիր կա, քանի որ ցուցակը եթե գլխավորի Սերժ Սարգսյանը, ապա, այդպիսով, նա կպահելու է իր ձեռքերը՝ ընտրությունների ազատ-արդար երաշխավորի առավել շահեկան դիրքում չլինելու առումով, բացի այդ՝ ՀՀԿ-ի վաս արդյունքի դեպքում նա չի կարողանա մյուս իշխանական ուժերի առավել բարենպաստ արդյունքները եւս իրենը համարել: Մյուս կողմից էլ՝ ՀՀԿ-ի նորացման, նոր տեսքով համամասնական ցուցակների մասին խոսակցությունը հուշում է, որ դա իսպառ բացառել չի կարելի, ու եթե հատկապես ՀՀԿ-ի ցուցակը գլխավորի երկրի նախագահը (ինչը մենք անհավանական ենք համարում), դա կարող է առավել գերլարված վիճակ եւ հասարակության տարբեր շերտերի առավել ակտիվություն առաջացնել (դեմի եւ կողմի, սեւի եւ սպիտակի): Թեեւ ընդհանուր առմամբ, ի հակադրություն անցյալի, մերոնք այս անգամ ճիշտ կանեին, որ իրենց համամասնական ցուցակների երրորդ տեղերը եւ հետագա յուրաքանչյուր երրորդ տեղերը ոչ թե հատկապես կուսակցականների տրամադրեին, այլ հասարակության մեջ հարգանք ունեցող, հասարակական ակտիվությամբ աչքի ընկած մտավորականների, որոնք իրենց պատկերացնում են օրենսդիր աշխատանքում: Մյուս կողմից էլ՝ այս մեր առաջարկին անմիջապես կարող են հակադրել «ո՞վ» հարցը, քանի որ վերջին տարիներին մեր հասարակության մեջ ամեն ինչ այնպես է աղավաղվել, մարդկանց այնպես են վերեւից եւ ներքեւից արժեզրկել ու փչացրել, որ իսկապես հարգանքի արժանի, որ իսկապես բանիմաց մարդուն երեւի չեն էլ ճանաչում, իսկ զանազան ծակամուտների եւ անգամ սերիալների դերասաններին ճանաչում են անուն առ անուն: Եվ նկատի առնելով այն, որ այս ընտրություններն ի վերջո վճռելու են, թե ո՞վ է լինելու մեր երկրի հաջորդ նախագահը, այս իմաստով ամեն ինչ շատ ավելի գերքաղաքականացված է լինելու: Հետաքրքրական է, որ երեկ ասուլիսած քաղաքական գործիչներից խոսրով Հարությունյանը ենթադրել է, որ հնարավոր է Սերժ Սարգսյանը զերծ մնա ցուցակը գլխավորելուց: Իսկ ՀՀԿ-ական Մկրտիչ Մինասյանը կարծիք է հայտնել, որ ՀՀԿ ցուցակը գլխավորելու է Սերժ Սարգսյանը, չնայած նաեւ ասել է, թե որոշումը համագումարինն է:

ԵՄ 1.7 մլն եվրոն՝ խորհրդարանական ու նախագահական ընտրությունները «ժողովրդավարական» անցկացնելու համար

«Եվրոպական միությունն ու Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը կաջակցեն Հայաստանում 2012 եւ 2013 թթ. կայանալիք ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը», տեղեկանում ենք Հայաստանում Եվրոմիության պատվիրակության մամուլի եւ տեղեկատվության բաժնի հաղորդագրությունից: Ընդ որում, ԵՄ-ը եւ ԵԱՀԿ-ը համաձայնության են եկել համատեղ ծրագրի իրականացման շուրջը, որի արժեքը կկազմի 1.7 միլիոն եվրո: Ֆինանսավորումը կկատարվի Եվրոմիության, իսկ իրականացումը՝ ԵԱՀԿ-ի երեւանյան գրասենյակի կողմից:

Այս երկու կառույցների նման նախաձեռնությունը բացատրվում է միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու հարցում Հայաստանին օգնելու ցանկության վերահաստատմամբ: Հաղորդագրության համաձայն, «Որպես հայաստանյան ընտրություններին վերաբերող առաջին համատեղ ծրագիր՝ այն նպատակ ունի օժանդակելու ընտրություններում ներգրավված շահագրգիռ բոլոր կողմերին:

Ծրագրով նախատեսում է ամրապնդել քաղաքացիական հասարակության հմտությունները՝ արհեստավարժ կերպով տեղական դիտորդական գործունեության իրականացման եւ ընտրական գործընթացների՝ ներառյալ ընտրաշավների, քվեարկության եւ բողոքարկումների ընթացակարգերի մասին զեկույցների պատրաստման համար, ինչպես նաեւ սատարել մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի ուժեղացմանը՝ տարածքային գրասենյակների հիմնման միջոցով՝ 2012 եւ 2013 թթ. խորհրդարանական եւ նախագահական ընտրություններից առաջ, ընթացքում եւ հետո:

Ընտրական հանձնաժողովների տեխնիկական եւ մասնագիտական ունակությունների հզորացմանը զուգահեռ կիրականացվի նաեւ հանցագործությունների մասին ստացված հաղորդագրությունների արագ արձագանքման, հասարակական կարգի պահպանության, ինչպես նաեւ ընտրություններին նախորդող բռնությունների քննության գործերում ներգրավված ոստիկանների տեխնիկական ունակությունների, գիտելիքների եւ հմտությունների բարելավում, ընտրական իրավունքների եւ ընթացակարգերի մասին հասարակության իրազեկման բարձրացում, մասնավորապես մարզերում:

Ա. Հ.

«Ժողովուրդ». «Դասավոր Թամրազյանը խախտել է օրենքը»

Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում երեկ շարունակվել է գեղարքունիքի մարզպետ, ԲՀԿ-ական Նվեր Պողոսյանի ներկայացրած հայցի քննությունն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի, որն էլ իր հերթին հակընդդեմ հայցով է հանդես եկել: Դասավոր Արթուր Թամրազյանն, ըստ «Ժողովուրդի», պետք է նախնական դատական նիստ նշանակեր երկու հայցերի առկայության դեպքում, սակայն դատավորը խախտել է օրենքը:

«Ժողովուրդ» օրաթերթի ներկայացուցիչ Հակոբ Ճարոյանը միջնորդել է նախնական դատական նիստ անցկացնել, ինչին առարկել են մարզպետի ներկայացուցիչները, գործով ներգրավված երրորդ անձ Աննա Թորոսյանն էլ համաձայնել է Ճարոյանի միջնորդությանը: Հիշեցնենք, որ հենց Թորոսյանի խոսքերն էր իր հրապարակման մեջ մեջբերել «Ժողովուրդը» այն մասին, որ մարզպետ Պողոսյանը 3000 դոլար կաշառք է վերցրել իր վարորդի միջոցով՝ դպրոցի պատմության ուսուցչի քննության ժամանակ Թորոսյանի մրցակցին անցկացնելու համար:

Ինչեւէ, դատավորը մերժել է միջնորդությունը, որից հետո Ճարոյանը դատավորին բացարկ ներկայացնելու համար 3 օր է խնդրել: Ըստ այդմ, հաջորդ նիստը կկայանա հունվարի 19-ին:

Ա. Հ.

Եվս 1,8 մլն դոլար՝ Doing business-ում առաջընթացի համար

Ցորտ՝ հարկման, արտահանման ու ներմուծման, սնանդամքերքի անվտանգության ու տեսչական ստուգումների ոլորտներում Հայաստանի կառավարության բարեփոխումներին աջակցելու միջոցով Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիան 1,8 մլն դոլար է տրամադրել: Նոր ծրագրի նպատակն է աջակցել կառավարությանը՝ բարելավելու Հայաստանի ներդրումային միջավայրը: Վաղը կառավարությունը կհաստատի ՄՖԿ-ի հետ կնքած այս պայմանագիրը:

Նախատեսվող միջոցառումների շարքում են օրենքների եւ այլ իրավական փաստաթղթերի վերանայումն ու առաջարկվող փոփոխությունների կամ նախագծերի մշակումը, առաջարկությունների մշակումն ուղղված ընթացակարգերի քայլերի քանակի, ժամանակի եւ ծախսերի կրճատմանը, ռիսկի վրա հիմնված, մասնավորապես՝ ստուգումների դեպքում, կանոնակարգման համակարգերի ստեղծման վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը Համաշխարհային բանկի խմբի փորձի եւ գիտելիքների կիրառմամբ եւ այլն:

Ակնկալվում է, որ իրականացվող բարեփոխումները պետք է զգալիորեն բարձրացնեն Հայաստանի մրցունակությունը եւ բարելավեն մեր երկրի դիրքը Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing business) դասակարգման մեջ:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԿ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Վրաստանը մոտ 900 հզ դոլար կտրամադրի՞, որ Սուրբ Նշանը վերականգնի

Թբիլիսիի Կարմիր Ավետարան եկեղեցին հսկայական մի կառույց է, հսկայածավալ մի եկեղեցի՝ պատերի այնպիսի հաստությամբ, որ գերազանցում է մեկ մետրը, սակայն եկեղեցին վաղուց խոնարհված, անգմբեթ ու կիսավեր է, Հավլաբարի կենտրոնական հատվածից ընդամենը մեկ զուգահեռ փողոց հեռու՝ բնակելի շենքերով «փողարկված» մի տեղ, ինչպես ասում են՝ աչքից հեռու:

Հունվարի 9-ին բռնկված հրդեհի պատճառով հանկարծ այս ու այնտեղ հիշեցին Կարմիր Ավետարանի՝ անտերության մատնված ճակատագրում լիովին բախտը կիսող մեկ այլ հայկական եկեղեցի՝ Սուրբ Նշանը, որ հրդեհի ոչ ճիշտ մարելու հետեւանքով սպառնում է նմանվել Կարմիր Ավետարանին: Ու հերթական անգամ, ինչպես դա արվեց Մուղնեցոց Սուրբ Գեւորգ եկեղեցու փլուզման ժամանակ, առաստրեն խոստումներ ենք հավաքում:

Հունվարի 11-13-ը Թբիլիսիում էր Հայաստանի մշակույթի նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության աշխատանքային խումբը՝ գործակալության պետ Սերժիկ Առաքելյանի գլխավորությամբ: Պարզվում է, արդեն հունվարի 13-ին Վրաստանի մայրաքաղաքի քաղաքապետարանը սկսել է եկեղեցու ներսի աղբի ու մոխրի մաքրման աշխատանքները:

Այն, ինչ պետք է վաղուց արվեր, նոր են սկսել կազմակերպել, եթե միեւնույն ժամանակ, եկեղեցուն չվնասեն նաեւ աղբահավաքները ճիշտ այնպես, ինչպես դա արեցին վրացի հրշեջները: Վաղուց անելիքների շարքից նաեւ, պարզվում է, վրացի մասնագետները դեռեւս 2011-ին կազմել են եկեղեցու վերականգնման նախահաշվային արժեքը, որն, ըստ նույն վրաց մասնագետների, կազմում է 1 մլն 400 հզ. լարի, այսինքն՝ մոտ 900 հզ. դոլար:

Այսպիսի գումարով վերականգնում իրականացնելու նախագիծը, գրեթե առանց կասկածի, իրականություն չի դառնա, համենայն դեպս մոտ ապագայի Վրաստանում: Գրեթե 900 հզ. դոլար որեւէ պարագայում վրացական իշխանությունները չեն հատկացնի հայկական եկեղեցու վերականգնմանը, որքան էլ հավակնություններ ունենան այդ եկեղեցին վրացական տեսնելու: Այսինքն՝ Սուրբ Նշանի վերականգնման աշխատանքների իրականացմանը վրացական միջոցներով հաստատ սպասել պետք չէ, քանի որ դրանից առաջ այդ վերականգնմանն է սպասում Մուղնեցոց Սուրբ Գեւորգը:

Ինչեւէ, հայկական կողմը վրացականի հետ, ըստ մշակույթի նախարարության, պայմանավորվածություններ է ձեռք բերել, նախ, հուշարձանի անվտանգ պահպանության նպատակով ներսի կիսաայրված զանգվածը հեռացնելու, հուշարձանի տարածքը մուտքը կանխարգելելու, փլված հարավարեւելյան սյան վերականգնման աշխատանքներն իրականացնելու առնչությամբ: Վերականգնման առումով էլ վրացական կողմը նախ պետք է 2012-ի Վրաստանի բյուջեի շրջանակներում ճշգրտումներ անի, եւ ապա միայն հստակ կլինի, թե ինչպես, երբ կիրականացվի վերականգնումը:

Իսկ այն, որ Հայաստանի մշակույթի նախարարության պատվիրակությունը վրացական կողմին առաջարկել է Սուրբ Նշանից ոչ շատ հեռու գտնվող Սուրբ Նորաշեն եկեղեցուց դուրս բերել այնտեղ պահվող գրականությունը, ֆիչ ավելի զավեշտի է նման, քանի որ այդ եկեղեցու պարագայում պետք է առաջին հերթին հեռացվեն վրացի այնպիսի հոգեւորականները, ինչպիսին հայր Թարիելն էր, որ ամեն գնով ուզում էր խցկվել հայկական եկեղեցի կամ վրացական ծիսական սիմվոլիկայով պատել հայկական տաճարը: Ու թեեւ գրականության հեռացման դեպքում «անզգույշ» հրդեհը Սուրբ Նորաշեն եկեղեցում կարելի է բացառել, սակայն քանի դեռ այդ եկեղեցիները չեն վերադարձվել իսկական տիրոջը, շինությունների փլուզման տարբեր «պատճառներ» կգտնվեն:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեկ օրում տեսախցիկները գրանցել են 300 խախտում մայրաքաղաքում

Հունվարի 16-ից Երեւան քաղաքում առաջին անգամ սկսեց գործել ճանապարհային իրավախախտումների արձանագրման կենտրոնը: Մայրաքաղաքի 10 խաչմերուկներ, փողոցներ, նաեւ միջպետական ճանապարհներ, արդեն հսկվում են տեսախցիկներով եւ արագաչափ սարքերով: Նորամուծության ներդրումից հետո առաջին օրվա ընթացքում մայրաքաղաքում գրանցվել է 300-ից ավելի իրավախախտումներ, տեղեկացրեց «Ամիլլես» վարորդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության նախագահ **Էդուարդ Հովհաննիսյանը**: Որքանո՞վ է իրատեսական մեր երկրում տեսախցիկներով ու արագաչափերի միջոցով իրավախախտումների արձանագրումը՝ **«Ազգի»** հարցին պրն Հովհաննիսյանը պատասխանեց. «Առաջին իսկ օրը իրենց կազմակերպության հեռախոսը չէր դադարում զանգեր ընդունելուց: Զանգահարում էին ինչպես վարորդներ, այնպես էլ լրագրողներ, քաղաքացիներ, եւ բոլորին հետաքրքրում էր, թե ի՞նչ է տալու այս նորույթը վարորդներին: Մենք այս իրադարձությանը սպասում էինք երեք տարի շարունակ, եւ կառավարությունը մեր բոլոր գրություններին, առաջարկներին պատասխանում էր, որ գումարներ չկան: Ի վերջո, գտնվեց այդ շատ թանկ հաճույքի գումարը եւ ներդրվեց, որը շատ կարեւոր գործ է: Ձեր հարցին, թե ինչ է տալիս վարորդներին, ասեմ, որ վերջին երեք տարիներին, երբ սկսվեց կիրառվել ու գործել Վարչական դատարանը, մենք ունեինք 400 դատական գործ

կարված վարորդների կողմից թույլ տված երթեւեկության կանոնների խախտմանը: Արդեն ավարտվել են երեք դատական գործ արագության գերազանցում, եւ երեքն էլ մենք շահել ենք: Այսինքն չի ապացուցվել արագության գերազանցում: Նման դատական գործերը կարող էին չլինել, եթե տեսանկարահանման ու արագաչափ սարքերը վաղուց տեղադրվեին ու արձանագրություններ չէին կազմվի»:

Պրն Հովհաննիսյանն ասաց, որ այցելել է նորաբաց «Սեկուրիտի Դվին» կազմակերպություն ու զարմացած է մնացել, որ ամենավերջին նորագույն տեխնիկայով զինված սարքավորումներով որեւէ խախտում հնարավոր չէ աչքաթող անել կամ թաքցնել: Իսկ այն հարցին, թե գոլդ համարներով ավտոմեքենաները դուրս կմնա՞ն հսկողությունից, պրն Հովհաննիսյանն ասաց. «Գործառույթն այնպես է ընթանում, որ հնարավոր չէ որեւէ խախտում չարձանագրվի: Նախ օպերատորը ֆիքսում է իր մոտ ամբողջական խախտումները 20-40 վրկ. եւ նա չի տեսնում ավտոմեքենայի պետհամարանիշը եւ հնարավոր էլ չէ: Իսկ երկրորդ փուլը՝ նա ուղարկում է այդ խախտումները, որտեղ բացվում է ու նոր հատակեցվում համարանիշը: Հաջորդ փուլը՝ հայտնաբերված խախտումը հստակ անհատական ծածկագրով ուղարկվում է ճանապարհային ոստիկանություն, որից հետո տպվում է խախտումը եւ ուղարկվում տվյալ խախտումը կատարած վարորդի հասցեով»:

Տեղեկացնենք, որ նման ծրար ստացած յուրաքանչյուր անձ կարող է իր թույլ տված խախտման լուսանկարող եւ տեսանկարող նյութերին մանրամասնորեն ծանոթանալ www.police.am ինտերնետային կայքի «Տեխնիկական սարքերով հայտնաբերված իրավախախտումներ» բաժնում՝ մուտքագրելով վարչական տույժ նշանակելու մասին որոշման անհատական ծածկագիրը: Պրն Հովհաննիսյանը նշեց, որ առաջին օրվա ընթացքում գրանցված 300-ից ավելի խախտումներում հիմնականում տեղ էին գտել արագության գերազանցում, հոծ գիծը հատելու, երթեւեկելի երթեւ գծերը երկուսի դարձնելը, կարմիր լույսի տակով անցնելը, խաչմերուկում հետիոտնին չզիջելը եւ այլն»: Գրանցված ամենակոպիտ խախտումը եղել է 180 կմ/ժամ արագություն Արշակունյաց փողոցի վրա երկու մեքենաների վարորդների կողմից, որն անթույլատրելի է համարում պրն Հովհաննիսյանը եւ առաջարկում է նման խախտման վարչական տույժը 30.000-ից բարձրացնել, քանզի նույն չափ տույժ է նախատեսված ընդամենը 100 կմ/ժամ արագությունը գերազանցելու համար:

«Տեսախցիկներով արձանագրված խախտումները կտան մեզ նյութ, երթեւեկության կանոնների, վարչական օրենսգրքի, ճանապարհային անվտանգ երթեւեկության մասին օրենքներում որոշ փոփոխություններ անելուն: Մենք այսօր իրոք ունենք միջազգային կոնվենցիային չհամապատասխանեցված երթեւեկության կանոններ, եւ որոշ կետեր անգամ վիճելի ու անլուծելի խնդիրներ են առաջացնում»:

Խախտումներ արձանագրող կազմակերպությունը յուրաքանչյուր դեպքից 70 տոկոս գումար գանձում է իր օգտին, եւ նա շահագրգռված է չթաքցնել որեւէ խախտում եւ հնարավոր էլ չէ, քանզի ամբողջ իրավիճակը վերահսկվում է: Մեր հանրապետությունում օրական գրանցվում է 2130 խախտում, իսկ 10 խաչմերուկների սարքերի արձանագրությունը մեկ օրում կազմել է 300, որն էլ մոտ 5 տոկոս է կազմում, որն էլ այդ չափով կնպաստի կոռուպցիայի նվազեցմանը: Նշենք, որ անցած տարի ՀՀ-ում գրանցվել է 780.000 խախտում: Իսկ այն վարորդները, ովքեր մտածում են, որ պետհամարանիշները ցեխոտելով, յուղ կամ մազի լաք փչելով կփորձեն մոլորեցնել տեսախցիկներին, չի ստացվի, քանզի վերջիններս աշխատում են ռադարով եւ ամեն կերպ կարող են ճշգրիտ «տեսնել»: Պրն Հովհաննիսյանը նշեց, որ Ազգային ժողովում վարչական իրավախախտումների մասին օրենքում փոփոխություններ մտցնելու առաջարկները առաջին ընթերցում անցել են, եւ այս համակարգը ներդնելուց հետո, մեկ ամիս անց հնարավոր է, որ լրացուցիչ փոփոխությունների առաջարկներ լինեն: Իսկ որ ամենակարեւորն է՝ փողոցներում չենք տեսնի վարորդ-տեսուչ փոխհամաձայնությունը: Տեղեկացնենք նաեւ, որ տեսասարքերը հարսանիքի կամ մահվան առիթով մեքենաների խախտումները նույնպես արձանագրելու են:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ

«Կարիտաս-Տաք ձմեռ» ծրագիրը կշարունակվի ՏԻՄ-երի հետ համագործակցության դեպքում

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը 2003 թվականից Շիրակի, Լոռու եւ Գեղարքունիքի մարզերում իրականացնում է «Տաք ձմեռ» ծրագիրը, որը կոչված է նպաստելու տարեց մարդկանց առողջության պահպանմանը՝ հոգալով նրանց բնակարանների ջեռուցման խնդիրները ձմռան ամիսներին: Ծրագրի շրջանակներում վճարվում են Գյումրի, Վանաձոր, Գավառ եւ Տաշիր քաղաքներում բնակվող 560 միայնակ եւ հաշմանդամ ծեր շահառուների գազի, էլեկտրաէներգիայի կամ վառելափայտի ծախսերը՝ ջեռուցման շրջանի ընթացքում յուրաքանչյուրին 80 եվրոյի չափով: 2012 թվականին, ինչպես նշվեց այս առթիվ երեկ «Ասպարեզ» ակումբում հրավիրված մամուլի ասուլիսում, դա հնարավոր կլինի միայն պետական կառավարման մարմնի հետ համագործակցության դեպքում:

«Այս տարի,- պարզաբանեց «Տաք ձմեռ» ծրագրի ղեկավար Ֆլորա Սարգսյանը,- ֆինանսավորումը ստանձնող «Գերմանական Կարիտաս» կազմակերպությունը պահանջում է տվյալ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից յուրաքանչյուր շահառուի համար առնվազն 1000 դրամ ներդրում: Մենք կարող ենք ամեն անձի համար վճարել 37 հազար, իսկ մեկ սիմվոլիկ 1000-ական դրամ ակնկալում ենք քաղաքապետարանից»: Գյումրու պարագայում խոսքը վերաբերում է 340 շահառուների, հետեւաբար տեղական մասնակցության գումարն էլ պետք է կազմի այդքան հազար դրամ: Տկն Սարգսյանը հարցը քաղաքապետին ներկայացնելուց հետո խնդրի լուծման դրական ակնկալիք ունի, ինչը հիմնավորված համարեց նաեւ ասուլիսին ներկա քաղաքապետարանի մամուլի քարտուղար Լիլիթ Աղեկյանը:

Տարեցների համար «Հայկական Կարիտասը» Գյումրիում իրականացնում է եւս երկու՝ ծերերի ցերեկային զբաղվածության կենտրոնի եւ «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագրեր:

Գ. Մ.

«Տաշիր» հիմնադրամի բարեգործական ծրագրերը

«Տաշիր» բարեգործական հիմնադրամից տեղեկացանք , որ հիմնադրամը նախաձեռնել է նոր ծրագրեր, որոնց շրջանակում նախատեսում է ֆինանսական միջոցներ հատկացնել լեյկոզով (արյան քաղցկեղ) հիվանդ 40 երեխայի բուժման համար:

Հիմնադրամը նախատեսում է նաեւ ֆինանսական աջակցություն ցուցաբերել Երեւանի պետական բուհերի ուսանողներին, ովքեր միջնակարգ կրթությունը ստացել են Արցախում ու Ջավախքում ու այսօր էլ աշխի են ընկնում իրենց առաջադիմությամբ:

Հիմնադրամի հաղորդագրությունը նաեւ նշում է, որ «Տաշիր» հիմնադրամի հիմնադիրներ Կարեն եւ Սամվել Կարապետյանները կարեւորում են աջակցությունը այն թիրախային խմբերին, որոնց համար պետության միջոցները բավարար չեն:

Ի. Պ.

ԱԶԳ

Փոխհարաբերություններ

- Ինչպե՞ս եք գնահատում նախագահ Միշել Սուլեյմանի այցը Հայաստան, երբ երկու երկրների հարաբերությունները համարվում են խիստ բարեկամական:

- Հայ-լիբանանյան հարաբերությունները պատմականորեն ամուր ու խորն են համարվում ոչ միայն պետական, այլ նաեւ հասարակության մակարդակով: Լիբանանում հայերը լիարժեք խաղաքաղաքացիներ են. պահպանելով իրենց հայկական ծագումը եւ չտարանջատվելով լիբանանյան հասարակական, քաղաքական եւ տնտեսական կյանքից՝ հայերը Լիբանանում դառնում են երկու երկրների հարաբերությունների զարգացման աղբյուրը : Տնտեսության ոլորտում հայերը Լիբանանում կարողացան կամուրջ լինել Հայաստանի եւ Լիբանանի Հանրապետությունների միջեւ: Ինչ վերաբերում է քաղաքական եւ դիվանագիտական հարաբերություններին, ապա վստահորեն կարող ենք ասել, որ դրանք գերազանց ու ջերմ են. երկու հանրապետությունները համատեղ աշխատում են միջազգային ասպարեզում եւ ՄԱԿ-ի շրջանակներում: Նախագահ Միշել Սուլեյմանի այցը Հայաստան մի անգամ եւս ուշադրություն է սեւեռում երկու երկրների խոր հարաբերությունների վրա: Նախագահի հետ Երեւան ժամանեց բարձր մակարդակի պատվիրակությունը՝ արդյունաբերության, տուրիզմի, կրթության նախարարները, ինչպես նաեւ ծագումով հայ պատգամավորներ, գործարարներ, ՁԼՄ-ների, վարչական ու անվտանգության ներկայացուցիչներ: Այս պատվիրակությունը համարվում է ամենամեծը նախագահ Սուլեյմանի միջազգային այցելությունների ժամանակ: Այցի արդյունքում ստորագրվեց 7 պայմանագիր՝ բարձրացնելով երկու երկրների միջեւ ստորագրված պայմանագրերի թիվը 27-ի: 20 պայմանագիր ստորագրվել էր 2004 թվականին նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի այցի ժամանակ:

- Ինչ ճանապարհներ է բացում Հայաստանը Լիբանանի համար Անդրկովկասում: Միեւնույն ժամանակ Լիբանանը ինչ դեր է խաղում Հայաստան-Մերձավոր Արեւելք հարաբերության մեջ:

- Ցանկանում ենք ձեռք բերել տնտեսական, առեւտրական, տուրիստական, ինչպես նաեւ կրթական ու մշակութային զարգացած հարաբերություններ, ինչը ճանապարհ կհարթի Լիբանանի համար՝ մուտք գործելու Հայաստան եւ այդպիսով նաեւ անդրկովկասյան երկրներ, միեւնույն ժամանակ Լիբանանը Մերձավոր Արեւելքի երկրների վրա բացված լայն դարպաս կդառնա Հայաստանի առաջ:

Հայաստանի եւ Լիբանանի միջեւ ստորագրված բազմաթիվ պայմանագրերը անզոր էին երկու երկրների միջեւ ստեղծված տնտեսական եւ առեւտրական հարաբերությունները հասցնելու քաղաքական փոխհարաբերության գերազանց մակարդակի: Անընդունելի է այն փաստը, որ երկու երկրների առեւտրական շրջանառությունը ըստ տնտեսական տվյալների գրանցում է խայտառակ ցուցանիշեր այն պարագայում, երբ Երեւանի ու Բեյրութի միջեւ հեռավորությունը չի գերազանցում մեկուկես ժամն անգամ: Շատերը դրա հիմքը տեսնում են Հայաստանի ոչ հզոր արդյունաբերության եւ Լիբանանի բնական ռեսուրսների աղքատության մեջ: Սակայն երկու երկրները հնարավորություն ունեն այլ ոլորտներում ներդրումներ կատարելու՝ բանկերի, տուրիզմի, ինչպես նաեւ կրթության եւ մշակութային դաշտերում եւ, ինչու չէ, կարող են հանդես գալ որպես տարանցող պետություններ:

Լիբանանը հնարավորություն ունի Հայաստանից ներմուծելու էներգետիկա եւ ժամանակակից տեխնոլոգիա, իսկ Հայաստանը Լիբանանից՝ տուրիստական, ֆինանսական ու բանկային ոլորտում մեր ունեցած փորձառությունը:

Քաղաքական առումով նախընտրում եմ խոսել փոխհարաբերությունների մասին: Լիբանանի Հանրապետության նախագահի վերջին այցը Հայաստան եւ պատգամավորների պալատի նախագահ Նեբիհ Բրրիի նախորդած այցը Երեւան ապացույց է, որ Հայաստանը կարեւոր նշանակություն ունի Լիբանանի ղեկավարների համար:

- Ինչ է Լիբանանի հայերի դերակատարությունը հայ-լիբանանյան հարաբերության մեջ:

- Մեկ անգամ եւս շեշտում եմ, որ Լիբանանի հայերը այդ երկրի լիարժեք քաղաքացիներ են. հիմնվելով այս ճշմարտության վրա՝ ասեմ, որ հայ լիբանանցիները կատարում են այսպես կոչված catalyst դերը, առավել եւս տնտեսական եւ առեւտրական մակարդակի վրա: Այնուամենայնիվ, եթե նրանք պասիվություն ցուցաբերեն, ինչը ես չեմ ցանկանա, ապա պետությանը հարկավոր կլինի այլ միջոցներ ապահովել՝ ակտիվացնելու տնտեսական փոխհարաբերությունները: Լիբանանի հայերը շահ ունեն այս զարգացման ընթացքից առաջին հերթին որպես Լիբանանի քաղաքացիներ: Նրանք կաշխատեն ամեն ինչ ձեռնարկել հայրենական պարտքը կատարելու համար. նախագահ Սուլեյմանի պատվիրակության մեջ կային հայ նախարարներ, պատգամավորներ ու գործարարներ, որոնք մեծ ոգեւորություն ներշնչեցին տնտեսական փոխհարաբերությունների խորացման գործընթացում: Այստեղ հարկավոր է նշել, որ Լիբանանի եւ Հայաստանի ներքին խնդիրները, ինչպես նաեւ տարածաշրջանում առկա մարտահրավերներն ու իրադարձությունները խոչընդոտում են վերոնշյալ տնտեսական ծրագրերի արդյունավետ իրականացմանը: Նախագահ Սուլեյմանի այցը վերականգնեց այս թեման՝ նոր շունչ տալով եւ հարթելով արգելքները:

Լիբանանի եւ Հայաստանի ղեկավարները՝ ասուլիսի ժամանակ, Երեւան:

- Ներկայումս շատ երկրներ տնտեսական ճգնաժամ են ապրում. ինչպե՞ս եք Դուք տեսնում Լիբանանի եւ Հայաստանի տնտեսական-առեւտրական փոխհարաբերությունները:

- Որեւէ խնդիր լուծելու համար առաջնային է խոստովանել դրա գոյությունը, այնուհետեւ ուսումնասիրել ու լուծման ճանապարհը գտնել: Եթե խոսենք Հայաստանի եւ Լիբանանի տնտեսական փոխհարաբերության մասին, ուրեմն հարկավոր է առաջին հերթին տնտեսական հանձնաժողով հիմնել, որը ընդգրկում է երկու երկրների նախարարներ, գործարարներ եւ պատգամավորներ, մանավանդ որ Լիբանանի պատգամավորների պալատում ունենք 6 հայ պատգամավոր: Այս հանձնաժողովի նպատակը կլինի հնարավորինս հարթել երկու երկրների տնտեսական ու առեւտրական ոլորտներում առկա խնդիրներն ու խոչընդոտները:

Նախագահ Սուլեյմանը Հայաստան կատարած այցի ժամանակ անդրադարձել է երկու երկրների բարձրագույն պետական հանձնաժողովի անհրաժեշտության խնդրին, ի դեպ, 2004 թվականին նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրին իր՝ Հայաստան կատարած այցի շրջանակներում գլխավորեց բարձրագույն պետական հանձնաժողովի առաջին ժողովը: Սպասում ենք այս հանձնաժողովի երկրորդ ժողովի կայացմանը Երեւանում կամ Բեյրութում՝ երկու երկրների վարչապետների գլխավորությամբ: Այնուհետեւ կկազմվեն ենթահանձնաժողովներ՝ տնտեսական, ֆինանսական, առեւտրական, արդյունաբերական, բանկային ոլորտներում համագործակցելու նպատակով:

- Ի՞նչ ճակատագիր է սպասում Հայաստանի եւ Լիբանանի միջեւ ստորագրված պետական պայմանագրերին:

- Հայաստանի եւ Լիբանանի կառավարությունները ստորագրել են 27 պետական պայմանագիր, որոնցից քանը գործում են, իսկ մնացած յոթը՝ տուրիստական, արդյունաբերական եւ կրթական ոլորտներում, տակավին ուսումնասիրման ընթացքի մեջ են:

Հավատարմատար Զիադ Աթալլան

Երկու երկրների պետական փոխայցելությունները մեծ նշանակություն ունեն այս պայմանագրերը ուժի մեջ դնելու գործընթացում:

- Լիբանանը հայտնի է աշխարով մեկ որպես տուրիստական երկիր: Կա՞ն արդյոք ծրագիր այս ոլորտի շրջանակներում՝ իրագործելի ներկայումս կամ մոտ ապագայում:

- Աշխատում ենք ավելի ակտիվ լինել տուրիստական ոլորտում, բայց ոչ ներկայումս ունենք հստակ ծրագիր եւ ոչ էլ մոտ ապագայում կունենանք: Արդյունավետ քայլ կլինի երկու կողմերի տուրիստական ընկերությունների միջեւ համագործակցության ծրագրերի համատեղ մշակումը, մասնավորապես զբոսաշրջության շրջաններում: Զբոսաշրջիկները կարող են Լիբանանից այցելել Հայաստան. այստեղ կան տեսարժան վայրեր, կարելի է վայելել Հայաստանի բնական գեղեցկությունը:

- Վերջերս բողոքի ալիք է բարձրացել Երեւան-Բեյրութ թռիչքների հետ կապված, ինչպիսի՞ն է լիբանանյան կողմի վերաբերմունքը այս խնդրին:

- Նպատակ կա ուղիղ չվերթ ստեղծելու. «Middle East» ավիաընկերությունը Բեյրութ-Երեւան-Բեյրութ նոր չվերթ կապահովի շաբաթը 2 կամ 3 անգամ: Ներկայումս մեկ թռիչք կա Հայաստանի ու Լիբանանի միջեւ:

- Ձեր սպասելիքները եւ դիվանագիտական նպատակները Հայաստանում 2012 թվականին:

- 2012 թվականը լինելու է աշխատանքային տարի: Պետք է իրականացնել նախագահ Միշել Սուլեյմանի ընդհանուր հեռանկարային ծրագրերը Հայաստանի եւ Լիբանանի միջեւ: Կարեւոր է նաեւ Բարձրագույն պետական հանձնաժողովի ժողովի գումարումը: Այնուհետեւ մասնավոր հատատությունների կողմից ներդրումներ իրականացնելու ճանապարհը հարթ է լինելու:

- Ձեր տպավորությունները Հայաստանի մասին այստեղ 3 ամիս ապրելուց հետո:

- Տպավորությունս դրական է: Ես ուրախ եմ այստեղ, մանավանդ որ երկու կարեւոր պետական այցերը՝ նախագահ Միշել Սուլեյմանի եւ վարչապետ Նեբիհ Բրրիի, կազմակերպվեցին հաջողությամբ :

Դուրեկան է հայ ժողովրդի ջերմ լինելը եւ հյուրընկալությունը, ինչպես նաեւ այլազգիների հանդեպ հանդուրժողականությունը: Այստեղ տոնական օրերին մարդիկ մեկ շաբաթ շարունակ շնորհավորում են միմյանց, նվերներ են փոխանակում, դա ջերմացնում է մթնոլորտը, ինչ չենք նկատում ժամանակակից այլ երկրներում:

Հարկավոր է նշել, որ Հայաստանը ապահով երկիր է, Երեւանում մարդիկ հանգիստ կարող են զբոսնել երեկոյան ժամը 8-ից հետո:

Հավանում եմ Հայաստանի չոր կլիման, քանի որ ես աշխատել եմ Վաշինգտոնում եւ Տոկիոյում, որտեղ խոնավությունը բարձր է Լիբանանի նման:

Ինձ դուր եկավ հայկական խոհանոցը. ես եկել եմ մի երկրից, որ հայտնի է իր համեղ խոհանոցով, ու դժվարանում եմ որոշել, թե որ հայկական ճաշատեսակը ավելի շատ սիրեցի:

Հարցազրույցը վարեց՝
ՄՈՎՍԵՍ ԽԵՉՈՅԱՆ

Հարցազրույց Երեւանում Լիբանանի գործերի ժամանակավոր հավատարմատար Զիադ Աթալլայի հետ

Իրանահայերը եւ սիրիահայերը հետաքրքրված են Հայաստանի անշարժ գույքի շուկայով

Հայաստանի անշարժ գույքի շուկայում ստեղծված իրավիճակին երեկ լրագրողների հետ հանդիպմանն անդրադարձան «Ակցեռն» կորպորացիայի նախագահ **Հակոբ Բաղդասարյանը** եւ Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ **Գագիկ Մակարյանը**:

Ըստ Հակոբ Բաղդասարյանի, վերջին 1-2 տարվա ընթացքում Հայաստանի անշարժ գույքի շուկայում կայուն իրավիճակ է տիրում, եւ չնայած շինարարությունում գրանցված անկմանը, անշարժ գույքի շուկայում գնանկում չի արձանագրվել: «Ակցեռն» կորպորացիայի նախագահի կանխատեսումներով, Հայաստանի անշարժ գույքի շուկայում 1-3 տարվա ընթացքում գները շատ չեն փոխվի, բայց դրանից հետո դրանք կարող են բարձրանալ:

Գագիկ Մակարյանի կարծիքով, առաջիկա ամիսներին Երեւանում անշարժ գույքի գները կնվազեն: Դա կապված է ընտրությունների հետ, քանի որ ընտրական գործընթացների ժամանակ երկրում գործարար ակտիվությունը նվազում է:

«Ակցեռն» կորպորացիայի նախագահ Հակոբ Բաղդասարյանը տեղեկացրեց նաեւ, որ Սիրիայի եւ Իրանի հայերի կողմից Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը բավականին մեծ է, ինչը պայմանավորված է այդ երկրներում լարվածությամբ: Նրա խոսքերով, Հայաստանի անշարժ գույքի շուկայում գործարքների 10-15 տոկոսը հենց այդ երկրների հայերի հետ է կատարվում: Հակոբ Բաղդասարյանը նշեց, որ իրանահայերը եւ ընդհանրապես իրանցիները միշտ էլ հետաքրքրություն են դրսեւորել Հայաստանի նկատմամբ, քանի որ մեր երկրում ազատության մակարդակն ավելի բարձր է:

Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանն ավելացրեց, որ իրանցիների համար Հայաստան գալն ու այստեղ անշարժ գույք գնել ավելի հեշտ է, քան Եվրոպայում: Եվրոպայում անշարժ գույքի գները բավականին բարձր են, իսկ միգրացիոն քաղաքականությունն էլ խստացվում է: Դա, ըստ նրա, նշանակում է, որ անշարժ գույքի պահանջարկը շուկայում կավելանա: Այդուհանդերձ, Գագիկ Մակարյանը այն կարծիքին է, որ իրանական ու սիրիական դեպքերը կարճաժամկետ ազդեցություն կունենան մեր անշարժ գույքի գների բարձրացման վրա, եւ մենք ավելի շատ պետք է հույս դնենք տնտեսության զարգացման վրա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Նորին գերազանցությունը» տվեց խաղաքական տարվա մեկնարկը

Իլհամ Ալիեւը հրավիրել եւ նախագահել է կառավարության այս տարվա անդրանիկ նիստը: Բնականաբար, նա անդրադարձել է նաեւ ղարաբաղյան կարգավորմանը: «Եթե որեւէ մեկը կարծում է, թե բանակցությունների հիմնական թեմա է պատերազմի կանխումը, ապա ես այդ կարծիքին համաձայն չեմ»,- չգիտես ում հետ հեռակա բանավիճել է նա եւ ավելացրել, որ ոչ որ պատերազմ չի ուզում, ավելին՝ «դա չի ուզում Ադրբեջանական պետությունը, որ հասել է նման մեծ հաջողությունների»:

Բայց դա, «նորին գերազանցության» կարծիքով, «չի նշանակում, թե բանակցային գործընթացը մի կողմ է դրվելու եւ որ բոլոր ջանքերն ուղղվելու են պատերազմի անթույլատրելիությանը»: Նա վստահեցրել է, որ «դա չի լինի»: Իլհամ Ալիեւի գնահատմամբ՝ հակամարտությունն ունի երկու լուծում՝ «բանակցային եւ ռազմական, երրորդ ճանապարհ չկա, այդ հակամարտությունը սառեցված չէ եւ այդպիսին չի լինելու»:

Առաջին հայացքից խիստ անտրամաբանական-հարձակողական թվացող այս հայտարարություններն ըստ էության կատարելապես մերկացնում են Ադրբեջանի արտաքին քաղաքական հնարավորությունների չափազանց սղությունը: Խնդիրը փորձել տեղափոխել «կամ- կամ» հարթություն, նշանակում է որեւէ վստահություն չունենալ ապագայի հանդեպ: Մանավանդ որ դա արվում է «այդ հակամարտությունը սառեցված չէ» բնութագրման համատեքստում:

Ավելին, Իլհամ Ալիեւը հասկացնում է, թեեւ՝ անուղղակի, որ խնդրի լուծումը մի կողմ թողնելու եւ ջանքերը պատերազմի վերսկսումը կանխելու նպատակին ուղղելու միտումներ կան: Նման հեռանկարը տրամաբանորեն չպետք է հարուցեր ադրբեջանական կողմի անհանգստությունը: Եվ եթե Իլհամ Ալիեւն այդ հանգամանքը ոչ միայն ընդգծում, այլեւ հայտարարում է դրան հակազդելու իր պատրաստակամության մասին, նշանակում է, որ իրավիճակի «սառեցումը» նրան խիստ վտանգավոր է թվում:

Դա կարող է ունենալ միայն մի բացատրություն. կարգավորման երկարաձգումը հնարավոր է, որ հանգեցնի Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման: Դա, ինչպես հասկացվում է Իլհամ Ալիեւի «ենթագիտակցությունից», լիովին հասկանում են Ադրբեջանում: Այդ է պատճառը, որ «մեկնարկային» ելույթում Իլհամ Ալիեւը որպես անցած տարվա հաջողություն ընդգծել է այն, որ համանախագահ երկրներն արտահայտվել են «ստատուս քվոյի անթույլատրելիության օգտին»:

Խնդիրն այն է, սակայն, որ անցած տարի բանակցային գործընթացում տեղաշարժի բացակայության հիմնական պատասխանատուն ինքը՝ «նորին գերազանցությունն» Իլհամ Ալիեւն է: Քանի որ կարգավորում ասելով նա «հասկանում է» միայն այն, ինչ ձեռնտու է Ադրբեջանին, եւ մերժում համանախագահ երկրների առաջնորդի ձեւակերպած հայեցակարգի՝ ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը վերաբերող գաղափարներն ու մեխանիզմները:

Կարելի է տպավորություն ստանալ, թե դա լուրջ-կշռադատված արտաքին քաղաքական կեցվածք է: Սակայն պարզվում է, որ Իլհամ Ալիեւը չի կողմնորոշվում նույնիսկ շատ հասարակ հարցերում: Նա, օրինակ, ՄԱԿ-ի ԱԽ-ի ոչ մշտական անդամությունն Ադրբեջանի համար դիտում է որպես «հաղթանակ» եւ ավելացնում. «Հաջորդ երկու տարիներին, լինելով միջազգային այդ ամենահեղինակավոր կազմակերպության անդամ, մենք կդրսեւորենք մեր սկզբունքային դիրքորոշումը»:

ՄԳԻՄՕ-ի շրջանավարտ «նորին գերազանցությունն», այսպիսով, ՄԱԿ-ի ԱԽ-ն համարում է «միջազգային կազմակերպություն», թե՞ լրատվամիջոցներն են «աղավաղել» նրա միտքը՝ դժվար է պարզել: Ամեն դեպքում, կարծում ենք, նախագահի պաշտոն զբաղեցնող մեկը պիտի իմանար, որ իր երկիրը միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությանը՝ ՄԱԿ-ին անդամակցել է 20 տարի առաջ: Բայց դրանից ոչ Իլհամ Ալիեւն է հասունացել, ոչ էլ այդ երկրի վերնախավի մտածողությունն է փոխվել:

Եվ վերջինը. «ստատուս քվո» ասելիս միջնորդները, համանախագահ երկրների առաջնորդները նկատի չեն ունենում այն, ինչ՝ Իլհամ Ալիեւը: Նրանց ասածը վերաբերում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակին՝ հօգուտ խաղաղության ընտրություն կատարելու հորդորով հանդերձ: Իսկ այնքան ժամանակ, որքան «նորին գերազանցությունն» իրեն անհասկացողի տեղ դնի, չցուցաբերի հանուն խաղաղության ընտրություն կատարելու քաղաքական կամք, իր հասկացած «ստատուս քվոն» իրոք մնալու է անփոփոխ՝ իրեն անհանգստացնող «վտանգով» հանդերձ:

ՎԱՀԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Մտեփանակերտ

ՉԺՀ խաղաքային բնակչությունն արդեն գերազանցում է գյուղականին

Դեռ վերջերս Չինաստանն ընկալվում էին նախ եւ առաջ իբրեւ ագրարային երկիր: Սակայն պարզվում է, որ պետության պատմության մեջ առաջին անգամ քաղաքային բնակչության բաժինը գերազանցում է 50 տոկոսը:

2011-ին Չինաստանում քաղաքաբնակների թիվն ավելացել է 21 միլիոնով, հասնելով 690,56 միլիոնի: Դա կազմում է ՉԺՀ ամբողջ բնակչության 51,27 տոկոսը: Գյուղաբնակների թիվը, ընդհակառակը, նվազել է 14,56 միլիոնով եւ ներկայումս կազմում է 656,56 միլիոն: Այդ մասին երեկ հաղորդեց ՉԺՀ պետական վիճակագրական վարչությունը:

Ընդհանուր առմամբ ՉԺՀ բնակչությունը 2011-ին աճել է 6,44 միլիոնով, հասնելով 1,34 միլիարդի: Ի-ՏԱՌ-ՏԱՍՍ-ը մանրամասնում է, որ 15-64 տարեկան բնակիչների թիվը մոտ 1 միլիարդ է:

Սաուդցիները խոստանում են 1 բարել նավթի գինը պահել 100 դոլար

Սաուդյան Արաբիան մտադիր է 1 բարել նավթի համաշխարհային գները պահպանել 100 դոլարի մակարդակի վրա: Այդ մասին հայտարարել է երկրի նավթի նախարար Ալի ալ Նայիմին CNN-ին տված հարցազրույցում:

Նրա խոսքերով, սաուդցիները հումքի այդ գինն առավել ընդունելի են համարում շուկայի բոլոր մասնակիցների համար:

Նավթի նախարարը մանրամասնել է, որ իր երկիրը ներկայումս արդյունահանում է օրական 9,4-9,8 մլն բարել նավթ, մինչդեռ ի վիճակի է արդյունահանել 12,5 մլն բարել: Նրա խոսքերով՝ Սաուդյան Արաբիան կարող է առանց դժվարության փոխհատուցել Իրանում օրական արդյունահանվող 2,5 մլն բարել նավթի ծավալները:

Բացի դրանից, ալ Նայիմին կասկածներ է արտահայտել, թե Իրանին կհաջողվի փակել Օրմուզի նեղուցը: Թեհրանը սպառնում է իրանական նավթի վաճառքի արգելման դեպքում շրջափակել Օրմուզի նեղուցը, որը Պարսից ծոցից հումքի ու նավթամթերքների արտահանման միակ ուղին է: Սաուդյան Արաբիան Օրմուզի նեղուցով օրական արտահանում է մոտ 10 մլն բարել նավթ:

Սաուդյան Արաբիան եւ OPEC-ի մյուս երկրները երկյուղներ ունեն, որ հումքի թանկացումը կարող է հանգեցնել պահանջարկի նվազմանը եւ գների անկմանը, ինչպես դա պատահեց 2008-ին:

ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի հակաիրանական պատժամիջոցները կարող են թանկացնել նավթը: ԵՄ-ը ուզում է արգելել իրանական նավթի գնումները, որպեսզի իրանցիներին զրկի իրենց միջուկային ծրագրի ֆինանսավորման միջոցներից: Թեհրանն արդեն նախազգուշացրել է OPEC-ի երկրներին, որ բեռնարգելքի հաստատման դեպքում չավելացնեն նավթի արդյունահանումը: OPEC-ում Իրանի ներկայացուցիչը կոչ է արել «չհամագործակցել Եվրոպայի եւ ԱՄՆ-ի հետ»:

ԼՈՆԴՈՆ

Բրիտանացի փոխվարչապետն Իսրայելին մեղադրեց ընդդիմագործության մեջ

Մեծ Բրիտանիայի փոխվարչապետ Նիկ Քլեգը Լոնդոնում Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասի հետ կազմակերպած մամլո ասուլիսում Իսրայելին մեղադրել է պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունների «միտումնավոր ձախողման» մեջ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Պաշտոնական Լոնդոնի կարծիքով, բանակցություններն անհամատեղելի են Պաղեստինի անկախ պետության մեջ հավանաբար մտնելիք տարածքներում իսրայելական ավանների կառուցման հետ:

Նիկ Քլեգը ընդգծել է, որ ավանների հետագա կառուցումը կարող է հանգեցնել հաշտության բանակցությունների վերջնական ձախողմանը: Նրա կարծիքով, հենց Իսրայելի այդօրինակ գործողություններին պատճառով երկու անկախ պետությունների ստեղծման ծրագիրը կարող է դառնալ անկենսունակ: Քլեգի խոսքերով՝ նոր ավանների կառուցումը չի նպաստի Իսրայելի եւ նրա քաղաքացիների անվտանգությանը:

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը ավելի ուշ իր նստավայրում անձամբ ընդունել է Աբբասին: Վարչապետը նշել է, որ երկու անկախ պետությունների ստեղծման ծրագրի կենսագործման ժամկետը սպառվում է, եւ արդեն այժմ հարկավոր է գործել:

Պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունները ընդհատվեցին 2009-ին՝ Այսրհորդանանում եւ Արեւելյան Երուսաղեմում իսրայելական ավանների կառուցման պատճառով: Պաղեստինցիներն ուզում են, որ այդ տարածքները մտնեն իրենց ապագա պետության մեջ: Կողմերը վերսին հանդիպեցին Հորդանանում 2012-ի հունվարի 3-ին՝ կառուցողական երկխոսությունը վերսկսելու ակնկալիքով, սակայն դիրքորոշումները մնացին անփոփոխ: Պաղեստինցիները բանակցելու նախապայման են համարում Շինարարության դադարեցումը, իսկ իսրայելցիները պահանջում են նախապես համաձայնեցնել ապագա պետությունների սահմանները:

Ավելի վաղ Իսրայելին քննադատել էր Ֆրանսիայի խորհրդարանը, գրում է «Հաարեց» թերթը: տարեսկզբին խորհրդարանի հրապարակած զեկուցագրում Իսրայելի իշխանությունները մեղադրվում են Այսրհորդանանում ջրային ռեսուրսները բաշխելիս «ապարթեիդի» քաղաքականություն վարելու մեջ: Ֆրանսիացի պատգամավորների տվյալներով, 450 հազար իսրայելցի վերաբնակները ավելի շատ ջուր են ստանում, քան նրանց հետ ապրող 2,3 միլիոն պաղեստինցիները:

Իսրայելի արտգործնախարարության ներկայացուցիչ Յիգալ Պալմորը զեկուցագիրն անվանել է «քարոզչական փաստաթուղթ», որը «հեռու է կառուցողական քննադատությունից»:

Հանսմանը հանեց թեկնածությունը հօգուտ Ռոմնիի

ԱՄՆ նախագահության նախնական ընտրություններում Հանրապետական կուսակցության թեկնածուներից Ջոն Հանսմանը հանել է թեկնածությունը եւ իր կողմնակիցներին կոչ է արել քվեարկել առավել հաջողակ հանրապետական թեկնածու Միթ Ռոմնիի օգտին:

Հանսմանը Յուտայի նախկին նահանգապետն է եւ համարվում է չափավորական հայացքների արտահայտիչ: Նյու Հեմփշիրի նահանգում անցկացված նախնական ընտրություններում նա քվեների թվով գրավեց 3-րդ տեղը՝ չնայած այդ նահանգում իր գործադրած հսկայական ջանքերին եւ Այովայի նահանգում ընտրություններին չմասնակցելուն:

Հանրապետական թեկնածուների միջեւ առաջիկա նախնական ընտրությունները կանցկացվեն շաբաթ օրը Հարավային Կարոլինայում, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Հանրապետականներն այժմ ունեն 5 թեկնածու՝ Միթ Ռոմնի, Ռոն Պոլ, Ռիկ Սանտորում, Նյութ Գինգրիչ եւ Ռիկ Պերի:

«Ազգը» գրել է Այովայում եւ Նյու Հեմփշիրում Միթ Ռոմնիի տարած հաղթանակների մասին: Մեկնաբանները կարծում են, որ ընտրարավից Հանսմանի դուրս գալը կօգնի Ռոմնիին, քանի որ նրանք մրցակցում էին ընտրողների միեւնույն խմբի քվեներն ստանալու համար:

Հանրային կարծիքի վերջին հարցումների տվյալների համաձայն, եթե ԱՄՆ նախագահական ընտրությունները հիմա անցկացվեին, ապա Ռոմնին գործող նախագահ Բարաք Օբամային կզիջի ընդամենը 5 տոկոսով: Ընտրություններն անցկացվելու են նոյեմբերի 6-ին:

Խորեն Աբրահամյան

Անելկա Գրիգորյան.- *Վահրամ Փափազյանից շա՞տ բան եք սովորել:*

Խորեն Աբրահամյան.- *Երբեւէ տեսե՞լ եք մսագործին հետեւող շանը՝ ակնդետ հայացքը դանակի ու ձեռքի շարժումներին գամված. ես այդպես հետեւել եմ նրան:*

(2004թ. Երեւան)

Ճշմարտություն–ահա գեղեցիկի ու հերոսականության նորօրյա գոյակերպը, որ առաջինը վկայեց ու սահմանեց մեր թատրոնում Խորեն Աբրահամյանը իր բոլոր դերակատարումներով՝ հայկական երկացանկից մինչեւ Իբսեն ու Շեքսպիր: Նա առաջինը եւ, ցավոք, առ այսօր վերջինը հանդգնեց ճեղքել Մեծն Փափազյանով մեր թատրոնը պարուրած դասականի պատյանը, ուր թովիչ կախարդանքը եւ շլացուցիչ վարպետությունը ակամա արգելափակում էին նոր ժամանակի մուտքը մեր բեմ:

Խորեն Աբրահամյանի յուրաքանչյուր դերակատարում այդ ժամանակի համար սեւեռուն կամքով նվաճվող տարածք էր, մեր բեմը՝ ժամանակի արվեստային ոգու հեռ համատարփ աթոռի մեջ դնելու անզիջում մաքառում:

Հրաժարումը՝ իդեալական ու անձեռնմխելի այդ պատյանից, ինքնագնումի ճանապարհ էր՝ արտիստի համար խիստ ցավագին ու տառապալից, քանզի ինքն այդ պատյանի ժառանգն էր, նրա ամենահմայված գերին:

«Ես Իգդիրը չեմ տեսել... ծնողներիս պատմածները՝ կռիվ, զենք, զոհված ազգականներս, որոնց անուններով գիտեմ, հպարտություն, պարտության դառնություն, հորաթրոջս խեղված ձեռքը՝ իմ աչքով տեսած, ասում էին՝ փամփուշտ կա մեջը, կորստի ցավ, լքված պաղեստինական տուն ու երգը՝ «Կարկուտ տեղաց Խանասորա դաշտումը» - սա Իգդիրն է՝ հարազատ, ինձ համար խիստ անձնական, սրանով էր լցված իմ մանկությունը, ես երբեմն խաղում էի ու խաղացնում ընկերներիս այդ պատմությունները»:

Այն, ինչ մանկական այդ խաղի նյութն էր, իր աչքով տեսածը չէր, այլ՝ լսածը միայն:

Ինչ իմանար «արտիստը», որ միամիտ ու անհոգ այդ խաղը բնազդական կանչ էր այն երկրից, որ ԹԱՏՐՈՆ են կոչում: Կյանքից դուրս մի տարածք, որ պիտի դառնար իր ապրելու մշտական տեղը եւ կերպը: Ինչ իմանար, որ այդտեղ խաղը ցավից է ծնվում ու կյանքի կոչում մտքի մեջ ծվարած սվերներին:

Շատ տարիներ անց «Սարոյան եղբայրներում» մանկության այս «բեռը» ձայնեց Խորեն Աբրահամյան արտիստի մեջ. իբրեւ ցավի ճիչ, իբրեւ խաղի կոչ: Ու ծնունդ տվին այդ սվերները մի տիպարի, որն իր ախարհի ճշմարտության անվերապահ հավատավորն էր, նաեւ՝ զինվորը: Իսկ ախարհն այդ դատապարտված էր չգոյության, եւ ինքն՝ անիմաց: Իրականից, ճշմարտից խուլ պատով օտարված այդ զորեղ մարդը հայտնվել էր մերձավորին հասկանալու, նրա հետ հաղորդակցվելու անհնարինության առաջ, դարձել տագնապներից տրոփող մի հարց, որ հասցեատեր չունի: Փլուզումն այդ կաթերի, որոնք իր էության հյուսվածքն էին, նրա իմաստն ու ոգին, կազմաքանդում են այդ էությունը: Եվ արդարն ու անարդարը, բարությունն ու անբարոն, հավատն ու անհավատությունը, ուժն ու բռնությունը, սերն ու անգթությունը գոտեմարտում են նրա հոգում:

Նա մոլորված է խառնակ, երկդիմի այդ իրավիճակում: Պատասխանատվությունը, որով հետամուտ էր ճշմարտությանը՝ հարությունն մշտատեւ, ինքնասույզ՝ «ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ... » հարցումին՝ մոլեռանդության փոխված, այդ ճշմարտության կողքով է անցնում՝ դարձնելով նրան իր իսկ մեղսավոր ախոյանը: Ու ծայր է առնում հոգու վայրէջքը՝ տանելով նրան ցած, անկում, բերանքսիվայր մահ:

Ժամանակին անսպասելի ու հանդուգն այս դերակատարումը (1968թ.) հիրավի անաչառ հայացք էր ոչ հեռավոր անցյալի փաստին եւ կաղապարված պատկերացումների մերժում՝ մարդկային ու զգացմունքային նոր շերտերի հայտնաբերումով: Սակայն այս ամենի արժեքն ավելին էր, քան այն, ինչն առանց վերապահումի կարելի էր կոչել նաեւ սքանչելի խաղ, վարպետության անսայթաք հանդես:

Այս դերակատարումը մերօրյա արտիստական իրողությունների մեջ ամենաբացառիկն է, մինչեւ օրս այդպես էլ չգրված հայերեն դրամատուրգիական ամենակատարյալ ստեղծագործությունը: Իր հյուսվածքով համահունչ ձայնումն է XX դարի թատերական ախարհընկալման ու գեղագիտության այն սկզբունքների, որ ծայր էին առել Անտոնեն Արտոյի անգթության թատրոնի մանիֆեստում եւ ապա ինքնաշիռ ձեւակերպումներ ստացան Սարտրի, Քամյուի, այլոց եւ աբսուրդի թատրոններում:

Այս դերակատարումն իրոնով ստեղծեց մի պատում, որին կարելի է ողբերգություն կոչել: Խորեն Աբրահամյանը կերտեց միայնակ եւ դատապարտված մի մարդու, որի ախարհը Սոդոմ-Գոմոր է, համատարած աղետ, ուր բոլոր ելքերը փակ են, ամեն ինչ անընդունելի է, սպառնալից, փրկության հույսը՝ կույր: Անզորությունը, հուսահատությունը, բարոյական ընտրության անհնարինությունը եւ մարդու ընդվզումը այդ ամենի հանդեպ ախարհընկալման այն զգացողությունն է, որի ակունքը ձգվում է դեպի «Ասված մեռավ» կանխատեսումը՝ բազում կերպավորումներ ստանալով Պիրանդելոյից մինչեւ Բեկետ: Խորեն Աբրահամյանի հերոսի ախարհում Գոդոյի սպասում անգամ չկար, նա այդտեղից վաղուց էր հեռացել:

Զուտ խաղով ձեւակերտված այս ախարհընկալումը, որ սյուժեով արծարծվող հավատի փաստի մասին անաչառ ու ճշմարիտ խոսք էր, մեծ իմաստով խոսում էր ոչ այնքան անցյալից, այլ՝ հենց ներկայից: Սա իր ժամանակի մտքի ու ապրումի պատկերավորումն էր արտիստական սուր եւ անվրեպ այն զգացողությամբ, որ մենաշնորհն է միայն կոչվածների, որոնց «ժամանակի խտացում եւ տարեգրություն» անունն է տրված:

Աստծու կողմից լքված այդ ախարհի ողբերգական վերապրումը արտիստը կերտավորում է իր հերոսի հանդեպ ունեցած դաժան անկեղծությամբ՝ ի ցույց դնելով ոչ միայն հուսահատ, մոլորված, միջավայրի ակամա «կալանավորը» դարձած մարդու, որի դեմքին ստեղ-ստեղ բացվող ժպիտը ամեն անգամ հույսի աղոտ սպասում ունի իր մեջ, այլեւ մարդկանց թիկունքին իր երկարատեւ, լուռ եւ կասկածամիտ հայացքը գամող, հետապնդող, չարախոհ, ի վերջո, անգութ պատժարարի:

Սա իսկական ողբերգուի արտիստական ախարհընկալումից ծնված կամային ակտ էր. հակասությունների այն զուգակցումը, երբ պատճառն ու հետեւանքը միաձուլեն են էության մեջ, երբ կերպարի կազմը արարվում է իբրեւ անանջատելի եւ իրարամերժ հատկանիշների միաժամանակյա, տրոփուն գոյավորում:

Սա այն էջքն է՝ հոգու հատակը մխրճված, որն իբրեւ ստեղծագործական սկզբունք ծայր էր առել Իբսենով եւ XX դարի դրամատուրգիայում դարձավ մեկնակետ, ինչին Օ' Նիլը պիտի կոչեր երկարատեւ ճամփորդություն դեպի խավար:

Սա ողբերգական ասք է՝ առանց երգի: Խորեն Աբրահամյանի ստեղծած կերպարի գեղարվեստական ընդհանրացումը համահունչ է դեռեւս 1919-ին նույն ժամանակի մասին Եղիշե Չարենցի տված բանաստեղծական վկայությանը.

- Գորշ, տաղտկալի ու խելագար երգ է կարծես այս կյանքը մի,

Ինչ-որ մեկի սրտում բացված վերք է կարծես այս կյանքը մի ...

Հիրավի, այս խաղի մեջ չկար այն կարոտակեզ, հուզավառ ու հաշտեցնող խոսքը, որ հին ողբերգություններում սրբագործում էր պատումի նյութը՝ ներդաշնակության բերելով միտքն ու հոգին: Այստեղ խոսքը՝ կիսաս, չասված, պատասխանից զուրկ, տեւական լռության մեջ այդպես էլ չի ծնվում:

Իր հերոսի հանդեպ Խորեն Աբրահամյանը դրսեւորում է արվեստագետի նորօրյա պահվածք, որ «բարոյական չեզոքություն» կոչվեց: Մի տեսակետ, որը XX դարի երկրորդ կեսին ազդարարեց շեքսպիրագետ Յան Կոտը, եւ որը դարձավ ժամանակի թատերական մեկնությունների շրջադարձային ելակետ՝ Եվրոպայում իր շքեղ ձեւակերպումները ստանալով, ասենք, Օլիվյեի Օթելլոյի, Սկոֆիլդի Մակբեթի, Լիր արքայի եւ այլ դերակատարումներում: Այդ պահվածքը Խորեն Աբրահամյանի արտիստական զտարյուն վարպետության ու գիտակցության խորքերից ծնված վարքագիծ էր՝ միանգամայն ներդաշնակ XX դարի թատերական գեղագիտության սկզբունքներին:

Իր կերպարի հոգու իրականությունը, որ սոսկալի էր, այլեւս չէր կարող սխալեցնել լինել, ինչպես Մակբեթինը – սա այն անսովոր հավատամքն էր, որ Խորեն Աբրահամյանը կրում էր իբրեւ խաչ, նրանից գեղեցիկն էին պահանջում, իսկ նա համառորեն պնդում էր իրենը՝ ճշմարիտը, որն այլեւս գեղեցիկը չէր: Այդ սոսկալիի ճնշումը Խորեն Աբրահամյանը չէր ամոթում վեհի, հերոսականի «փրկօղակով». դա իրենը չէր: Եվ իր համար երբեք պատահական, իսկ հայ բեմի շեքսպիրյան ավանդական խաղացանկը ճեղքած եւ մեզ համար անսպասելի հայտնված իր Կորիոլանի պես եւ նրա խոսքով՝ իր բեմական հերթական վիճահարույց ձեռնարկն ուղեկցող կշտամբանքներին ի պատասխան նա՝ «անկարող իր բնույթը փոխելու», կարծես ասելիս լիներ.

Եթե հպատակվենք սովորությանը ամեն բանի մեջ,

Ոչ ոք չէր սրբի դարերի փոշին...եւ սխալները անվերջ դիզվելով

Իրենց վիթխարի լեռնապարի տակ, պիտի թաղեին ճշմարտությունը ...

Ստեղծած կերպարով հարուցած հուսահատությունը Խորեն Աբրահամյան արտիստը կրում է սկզբից մինչեւ վերջ՝ անվարան վճռականությամբ՝ ի ցույց դնելով իր ժամանակի պատկերը: Նա ստիպում է հանդիսատեսին կանգնելու կյանքին դեմ հանդիման, ուր երգը խեղդվել է ցավից, կարեկցանքը վտարվել, ուր ճշմարտության դեմքը դաժան է, նողկալի ու երկյուղալի:

Խաղի այս կերպն ու ոգին պոկվում, բարձրանում ու հեռանում են խաղարկվող կերպարից ու դառնում ինքնին ճշմարտության ահազանգ, մարտահրավեր կյանքը համակած աղետին եւ հավատի հորդոր՝ միշտ մնալով արժանապատվությամբ լի ու ազնիվ:

Անելկա Գրիգորյան.- *Ձեզ երբեմն դիմում են՝ Վարպետ, դուք հա՞շտ եք դրա հետ:*

Խորեն Աբրահամյան.- *Երբե՛ք: Վարպետը Փափազյանն էր, նույնիսկ Հրաչյա Ներսիսյանին վարպետ չէինք ասում... Փափազյանը նրան «մանչս» էր ասում... նրանք գերմարդիկ էին...ես ինձ չեմ խաբել երբեք եւ մի բան խորապես վստահ կարող եմ ասել՝ երբեք չեմ ստել: Ինչ էլ անեմ, ինչ էլ խաղամ, դա ես եմ՝ լավ, թե վատ»:*

(2004թ. Երեւան)

Եվ, իսկապես, ի՞նչ է դերը արտիստի համար, եթե ոչ մարդկային տեսակի բազմաթիվ ու բազմազան հնարավորությունների հայտնաբերումը իր մեջ, իրենից ծնված իր արյունակիցը, մի հանդուգն մարտահրավեր բնությանը, մարդու եզակի լինելության՝ ախարհում սահմանված կարգ-արգելանքին: Մի դաժան ու անզիջում երկխոսություն՝ իր մեջ ծվարած անտես սվերին կենդանություն պարգեւելու, արարելու ակնառու մի կազմ՝ հղացումին համապատասխան: Մեռնող ու հառնող ծեսի մի բացառիկ փոխակերպում, ուր ծիսարարն ինքը ե՛ւ զոհն է, ե՛ւ փրկիչը միաժամանակ, երբ մեկմեկու անէացնելու եւ վերագտնելու անընդհատելի ու անորալի այդ այլասեղծման մեջ արտիստը ո՞վ է, եթե ոչ, Չարենցի ասած, նյութ ինքնարարիչ՝ ասվածային շնորհով արտնված:

ԱՆԵԼԿԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ





Մարկոս Պիզելի. «Կուբան» տեղափոխվելն առաջընթաց էր ինձ համար»

Կրասնոդարի «Կուբանի» հետ օրերս եռամյա պայմանագիր կնքած Մարկոս Պիզելին թիմի հետ մեկնել է Իսպանիայի Օլիվա Նովա քաղաք, որտեղ մասնակցում է ուսումնամարզական հավաքին: Բրազիլացի հարձակվողը հարցազրույց է տվել «Կուբանի» պաշտոնական կայքին, որը ներկայացնում ենք «Ազգի» ընթերցողներին:

- Մարկոս, ֆուտբոլային ֆո կարիերան կարելի է արտասովոր համարել: Դու բրազիլացի ես, սակայն խաղում ես Հայաստանի ազգային հավաքականում: Ինչպե՞ս դա պատահեց:

- 20 տարեկանում հանդես էի գալիս բրազիլական մի թիմում, որտեղ միայն երիտասարդ ֆուտբոլիստներ էին ընդգրկված: Իմ խաղն արժանացել էր Երևանի «Արարատի» սելեկցիոներներից մեկի ուշադրությանը: Ընդունեցի առաջարկը եւ մեկնեցի Հայաստան: Առաջին մրցաշրջանում «Արարատում» կարողացա ամրագրվել հիմնական կազմում, իսկ հետագայում սկսեցի նաեւ լավ խաղ ցուցադրել ու աչքի ընկնել արդյունավետությամբ: Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն ու ազգային հավաքականի գլխավոր մարզիչն առաջարկեցին հանդես գալ Հայաստանի ընտրանում: Համաձայնվեցի, քանի որ Բրազիլիայի հավաքականում ընդգրկվելը շատ բարդ է: Իսկ Հայաստանի հավաքականում հանդես գալով կարող էի հաջողության հասնել ֆուտբոլային կարիերայում:

- Փաստորեն այդպես էլ ստացվում է: Հայաստանից սկզբում տեղափոխվեցիր ուկրաինական պրեմիեր լիգա, այժմ էլ հանդես ես գալու ՌԴ առաջնությունում:

- Այո, այդպես է, թեեւ հարկադրված եմ եղել նաեւ հետքայլ կատարել: Դա, իհարկե, ինձանից կախված չէր: «Արարատը» ֆինանսական խնդիրներ ուներ, ուստի ակումբի ղեկավարությունը որոշեց ինձ ուղարկել Ֆրանսիա, որտեղ խաղացի տեղի սիրողական թիմում: Կես տարի անց արդեն ինքս կարող էի տնօրինել ճակատագիրս: Պայմանագիր կնքեցի Հայաստանի ուժեղագույն ակումբի՝ «Փյունիկի» հետ:

- Իսկ ինչո՞ւ որոշեցիր վերադառնալ Հայաստան:

- Կարելի է ասել, որ ինձ հարազատ էի զգում այդ երկրում: Արդեն տիրապետում էի հայերենին, ընկերներ ունեի, լավ ծանոթ էի առաջնության մասնակիցներին: Բացի այդ, դա հիանալի առիթ էր որոշ ընդմիջումից հետո կրկին հրավիրվել Հայաստանի հավաքական:

- Պատմիր Դոնեցկի «Մետալուրգում» ֆուտբոլային կարիերայիդ մասին:

- Ուրախ էի, որ ինձ հնարավորություն ընձեռվեց խաղալու ավելի ուժեղ առաջնությունում: Ստացվում է, որ իմ ջանքերը գնահատեցին: Իհարկե, Ուկրաինայում խաղալն ավելի բարդ էր: Կիեւի «Դինամոն», «Շախտյորը», «Մետալիստը», «Դոնեցքը» Եվրոպայում լավ համբավ ունեն: Իհարկե, Ուկրաինայում բարձր արդյունավետությամբ աչքի ընկնել չհաջողվեց: Դա պայմանավորված էր նաեւ այն փաստով, որ «Մետալուրգում» խաղում էի հարձակողական կիսապաշտպանի դիրքում, երբեմն էլ հարկ էր լինում գործել միջին օղակի եզրերում:

- «Կուբան տեղափոխվելուն ինչպե՞ս ես վերաբերվում:

- Դա ինձ համար զգալի առաջընթաց էր: ՌԴ առաջնությունը լավագույններից է Եվրոպայում, իսկ «Կուբանը» երկրի ուժեղագույն ակումբներից է:

- Դան Պետրեսկուի թիմում ո՞ր դիրքում կնախընտրես խաղալ:

- Ենթահարձակվողի: Սակայն եթե մարզիչն ինձ այլ դիրքում կտեսնի, կաշխատեմ օգտակար լինել թիմին:

- Քեզ ծանո՞թ է «Կուբանի» խաղային մոդելը:

- Առաջին տարին չէ, որ հետեւում եմ ՌԴ առաջնությանը: «Կուբանի» մասնակցությամբ շատ խաղեր եմ դիտել: Թիմը հավասարակշռված ֆուտբոլ է ցուցադրում: Գնդակը կորցնելուն պես կիսապաշտպանները նահանջում եւ օգնում են պաշտպաններին, ինչի շնորհիվ թիմը քիչ գոլեր է բաց թողնում: Իսկ հարձակման գծում թիմում խաղում են արագաշարժ, հզոր հարձակվողներ: Մի խոսքով, «Կուբանը» ժամանակակից ֆուտբոլ է ցուցադրում, որում յուրաքանչյուր խաղացող կարողանում է տարբեր խնդիրներ լուծել:

- Ի՞նչ կարող ես ասել Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի մասին:

- Հետաքրքրական մրցաշար էր, որում մինչեւ ավարտական տուրը հայտնի չէին ուղեգրերի տերերը: Դեռ երբեք Հայաստանի հավաքականը ուղեգիր նվաճելու հնարավորություն չէր ունեցել, ինչպես այս անգամ: Խաղային բոլոր առումներով հավաքականն առաջադիմել է, լավ արդյունքի հասավ: Հոգեբանական առումով էլ առաջընթացն առկա է: Այդ մասին է վկայում այն փաստը, որ հյուրընկալվելիս միայն երկու թիմի՝ ՌԴ-ին եւ Իռլանդիային պարտվեցինք, որոնք էլ ի վերջո Եվրո-2012-ի ուղեգիր նվաճեցին: Ուրախ եմ, որ Հայաստանի հավաքականի առաջընթացում նաեւ իմ ներդրումը կա:

- Ի դեպ, ՌԴ հավաքականի հետ խաղում դու ՀՀ հավաքականի խփած միակ գոլի հեղինակ դարձար: Լա՞վ ես հիշում այդ խաղը:

- Իհարկե: Ինձ հաջողվեց բացել խաղի հաշիվը: Շատ երջանիկ էի, որ նման խաղում հաջողության հասա: Ցավոք, այդ խաղում պարտվեցինք: Բայց այդ խաղը մեզ համար զգալի փորձ էր:

- Դու արդեն հասցրել ես մասնակցել «Կուբանի» մի քանի մարզման: Առանձնացնելու որեւէ բան կա՞:

- Այս փուլում հիմնական շեշտը դրվում է ֆիզիկական որակների վերականգնման վրա: Ես ընդամենը մեկ շաբաթ առաջ եմ վերադարձել արձակուրդից, ուստի նոր եմ սկսում մարզվել: «Կուբանում» հիանալի մթնոլորտ է, շատ համերաշխ կոլեկտիվ է: Ինձ թիմում շատ ջերմ ընդունեցին: Այնքիսի տպավորություն է, որ թիմում ոչ թե մի քանի օր, այլ 3 տարի եմ գտնվում: Ուստի զարմացած չեմ, որ «Կուբանին» հաջողվել է լավ արդյունքների հասնել:

- Ի՞նչ կցանկանաս փոխանցել թիմի երկրպագուներին:

- Թող վստահ լինեն, որ ամեն ջանք կգործադրեմ նպաստելու «Կուբանի» հաջող ելույթներին: Ինձ աչքի ընկնելու հնարավորություն է տրվել եւ պետք է օգտվել դրանից: Թիմը կարող է պայքարել Եվրոլիգայի ուղեգրի համար, թեեւ դրա նվաճումը շատ դժվար կլինի: Գիտեմ, որ «Կուբանի» երկրպագուները ջերմորեն աջակցում են թիմին, մարզադաշտը մշտապես լեփլեցուն է: Վստահ եմ, որ նրանց աջակցությամբ «Կուբանն» ունակ է եւս մեկ քայլ առաջ գնալու:

Նորզելանդացիների յուրօրինակ առաջարկը

Նորզելանդացի ֆերմերներն առաջարկել են ոչխարների խուզումը որպես ցուցադրական մարզաձեւ ընդգրկել օլիմպիական խաղերի ծրագրում: Նոր Զելանդիայում նման առաջնություն է անցկացվում, որը լայնորեն լուսաբանվում է լրատվամիջոցներում եւ մեծ հետաքրքրություն է առաջացնում մարզասերների շրջանում: Մարտին այդ երկրում նախատեսում են անցկացնել աշխարհի առաջնություն, որի միջոցով նորզելանդացիները ցանկանում են իրենց «մարզաձեւի» վրա բեւեռել շատերի ուշադրությունը:

Ի դեպ, յուրօրինակ այս «մարզաձեւում» գրանցվում են նաեւ համաշխարհային ռեկորդներ: Տղամարդկանց մրցումներում լավագույն արդյունքի է հասել իռլանդացի Այվեն Սկոտը, որն 8 ժամում 749 ոչխար է խուզել: Դա 8 ոչխարով գերազանցում է համաշխարհային նախկին ռեկորդը: Կանանցից ռեկորդակիրը նորզելանդացի Կերի-Զո Թե Խայան է՝ 507 ոչխար: Նախկին ցուցանիշը նա գերազանցել է 37-ով:

Նոր Զելանդիայի «Սպարկ» պետական մարզական հիմնադրամը ոչխարների խուզումը համարում է մարզաձեւ, իսկ Ավստրալիան այն առաջարկել է ընդգրկել Համագործակցության խաղերում:

ՀԱՄԱՍ

Արոնյանը կրկին ստանձնեց առաջատարի դերը

Նախորդ տուրում Մագնուս Կառլսենից կրած անդրանիկ պարտությունից հետո Լեւոն Արոնյանը Գատա Կամսկու հետ մրցավեճում մարտականորեն էր տրամադրված՝ վերականգնելու առաջատարի իր դիրքը: Եվ դա նրան հաջողվեց: Սպիտակներով խաղացող հայ գրոսմայստերը նավակային վերջնախաղում կարողացավ օգտագործել անցողիկ մեկ ավելի զինվորի առավելությունը ու ստիպեց մրցակցին 58-րդ քայլին հանձնվելու: Արոնյանը մրցաշարում 3-րդ հաղթանակը տոնեց ու Մագնուս Կառլսենի հետ 3 միավորով գլխավորեց աղյուսակը: Նորվեգացի գրոսմայստերը հաշտություն կնքեց Ֆաբիանո Կարուանայի հետ: Ոչ-ոքի ավարտվեցին նաեւ Թոփալով-Հաշիմով, Իվանչուկ-վան Վելի, Գիրի-Նակամուրա, Գելֆանդ-Ռաջաբով պարտիաները: Կարյակինը 2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Նավարայի հետ մրցախաղում:

4 տուրից հետո 2,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Կարուանան ու Ռաջաբովը: 2-ական միավոր ունեն Կարյակինը, վան Վելին, Իվանչուկը, Գիրին եւ Թոփալովը: Այսօր մրցաշարի մասնակիցները հանգստանում են, իսկ վաղը կայանալիք 5-րդ տուրում Արոնյանը սեւերով կմրցի Լյուկ վան Վելիի հետ: Կառլսենի մրցակիցը կլինի Գիրին:

Շախմատի մրցաշարում անհաջող ելույթներն է շարունակում Էլինա Դանիելյանը, որը 2-րդ պարտությունը կրեց Լարու Օսեսի հետ մրցավեճում: 4 տուրից հետո Էլինան 1 միավոր է վաստակել: 100 տոկոսանոց արդյունքով առաջատարը Մախիմ Տուրովն է, որը հերթական հաղթանակը տոնեց Անե Հասսի հետ պարտիայում:

Քոթանջյանը զիջեց դիրքերը

Թավրիզում շարունակվող շախմատի միջազգային մրցաշարի 6-րդ տուրում ուշադրության կենտրոնում առաջատարների՝ Տիգրան Քոթանջյանի եւ Պոուրիա Դարինիի մրցավեճն էր: Սկզբունքային այդ մրցախաղը շահեց սպիտակներով խաղացող Քոթանջյանը ու Էշամ Ղաեմ Մագամիի հետ 5,5 միավորով գլխավորեց աղյուսակը: Սակայն 7-րդ տուրում Քոթանջյանը զիջեց վրացի միջազգային վարպետ Գայոզ Նիգալիձեին ու նահանջեց 6-րդ հորիզոնական: Հայ շախմատիստն առաջին պարտությունը կրեց:

7 տուրից հետո մրցաշարում եռիշխանություն է: 6-ական միավորով աղյուսակը գլխավորում են իրանցիներ Պոուրիա Դարինին, Էշամ Ղաեմ Մագամին եւ վրացի Գայոզ Նիգալիձեն:

Դարչինյանը կրկին կփորձի նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը

36-ամյա Վախթանգ Դարչինյանը եւս մեկ հնարավորություն կունենա քաշային 3-րդ կարգում էլ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու: Ինչպես տեղեկացրել է Վախթանգի պրոմոութեր Գերի Շոուն, համաձայնություն է ձեռք բերվել ճապոնացի պրոմոութեր Ակիխիկո Հոնդայի հետ թեթեւագույն քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Շինսուկե Յամանակայի հետ մենամարտ կազմակերպելու հարցում: Նախատեսվում է այդ մենամարտն անցկացնել մարտի վերջին կամ ապրիլի սկզբին:

«Շատ ուրախ եմ, որ կարողացա Վիկի համար չեմպիոնական մենամարտ կազմակերպել: Նա շատ էր ցանկանում եւս մեկ հնարավորություն ստանալ պայքարելու աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Դա է պատճառը, որ թեեւ չնչին պարգեւավճարին, համաձայնվեցինք ճապոնացի բռնցքամարտիկի հետ մենամարտելու առաջարկին: Դեռեւս Յամանակիի մենամարտերի տեսագրությունները չեմ դիտել: Դրանց դիտումից հետո պատկերացում կկազմեմ մրցակցի մասին: Պետք է արժանին մատուցել Վիկին, որը մշտապես ցանկանում է ուժեղ բռնցքամարտիկների հետ մենամարտել եւ պատրաստ է ռինգ դուրս գալ յուրաքանչյուր երկրում», նշել է Գերի Շոուն:

29-ամյա Յամանական առայժմ պրոֆեսիոնալ ռինգում պարտություն չունի: Նա անցկացրած 17 մենամարտերից 15-ում հաղթել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի: WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսին նա արժանացել է իր նախորդ մենամարտում՝ տեխնիկական նոկաուտով 11-րդ ռաունդում հաղթելով մեքսիկացի Քրիստիան Էսկիվելյային: Վախթանգ Դարչինյանը պրոֆեսիոնալ ռինգում 42 մենամարտերից 37-ում հաղթել է, 1-ն ավարտել է ոչ-ոքի, կրել է 4 պարտություն: Վերջին մենամարտը նա անցկացրել է անցյալ տարվա դեկտեմբերի 3-ին ԱՄՆ-ի Անահայմ քաղաքում, որտեղ միավորներով զիջել է Անսելմո Մորենոյին:

Դավիթ Ալաբան ամենաերիտասարդ լավագույն ֆուտբոլիստն է

Մյունխենի «Բավարիայի» կիսապաշտպան Դավիթ Ալաբան ճանաչվել է Ավստրիայի լավագույն ֆուտբոլիստ: Նա դարձավ լավագույնի կոչմանն արժանացած ամենաերիտասարդ ֆուտբոլիստը: Հարցմանը մասնակցել են Ավստրիայի բարձրագույն խմբի առաջնության 10 ակումբների գլխավոր մարզիչները:

19-ամյա Ալաբան վաստակեց 21 միավոր: Նա մեկ միավորով գերազանցեց 2-րդ տեղը գրաված «Աուստրիայի» հոլանդացի հարձակվող Նասեր Բարազիտին: 13 միավորով 3-րդ տեղում «Շտուրգարտի» ֆուտբոլիստ Մարտին Հարնիկն է:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

Օրվա հեռանկար

Ի՞նչ կարող է անել Բաֆուն, եթե Իրանին հարվածեն

«Արաբական գարունը», ինչպես եւ դժվար չէր ենթադրել, վերջապես, գոնե խոսակցությունների ու սպառնալիքների մակարդակով, հասավ բուն նպատակին՝ Իրան: Այս օրերին չեն դադարում խոսակցությունները, որ ԱՄՆ-ը, եւ իհարկե նաեւ Իսրայելը կարող են հարվածել Իրանին, ու այս համատեքստում հնչում են փորձագիտական որոշ կարծիքներ, որ դա կլինի «երրորդ աշխարհամարտի» սկիզբը: Այս կապակցությամբ հրեա քաղաքագետ Ավիգդոր Էսկինը բավական ուշագրավ հայտարարությամբ է հանդես եկել: Ադրբեջանական vesti.az կայքին տված հարցազրույցում Էսկինը հայտնել է. «Կարծում եմ, որ Իսրայելը մի քանի հարվածներ կհասցնի Իրանին՝ վերջինիս ատոմային ծրագրերը կասեցնելու նպատակով: Թեհրանը պատասխան հրթիռները կարձակի Իսրայելի ուղղությամբ, ինչին կհաջորդի Իրանի համար խիստ ցավալի պատասխանը. միջազգային հանրությունը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, կմիջամտի՝ ռազմական գործողությունները կասեցնելու նպատակով», ասել է Էսկինը:

Միեւնույն ժամանակ Իրանի հետ ռազմական գործողությունները, եթե բաց ընթանան, ապա հրեա գործչի խոսքերով՝ «Ադրբեջանը հրաշալի հնարավորություն կստանա ռազմական ճանապարհով լուծելու ԼՂ-ի հարցը»: Էսկինի հայտնած դիրքորոշումները ոչ այնքան անկախ վերլուծաբան-փորձագետի դիրքորոշումների են նման, որքան հրեական պետության շահերին համահունչ քաղաքականության ներկայացման: Սակայն մի շարք կարեւոր հանգամանքներ Իրանին հարվածողներն ու այդ ընթացքում ԼՂ հարցը, այն էլ ռազմական ճանապարհով լուծել պատրաստվողները մոռանում են: Նախ, եթե պատկերացնենք անգամ, որ Իրանի նկատմամբ ռազմական գործողություններ են սկսվում, ապա դժվար չէ պատկերացնել, որ դրանք բառացիորեն աղետալի կլինեն ողջ տարածաշրջանի համար: Վերհիշենք թեկուզ միայն այն, որ ՆԱՏՕ-ն «սովորություն ունի» ռմբակոծել ոչ ճիշտ թիրախները: Հետեւաբար՝ ենթադրյալ այդ պատերազմի ժամանակ տարածաշրջանում ոչ մի երկիր ուղղակի չի կարող մտածել իր այլ նպատակների իրագործման մասին, բացի սեփական անվտանգության ապահովման գերխնդրից: Բացի սրանից, եթե պատերազմ է սկսվում Իրանի դեմ, ապա տարածաշրջանի բոլոր երկրներից բացի, որոնք ուզեն թե չուզեն ներքաշված են լինելու, կասկած չկա, որ «ներկայանալու է» նաեւ Ռուսաստանը:

Մասնավորապես ՆԱՏՕ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ **Դմիտրի Ռոգոզինը** օրերս հայտարարեց. «Իրանի նկատմամբ հարվածը հարված է ՌԴ անվտանգությանը», իսկ երեկ էլ ՌԴ ԱԳ փոխնախարար Գենադի Գատիլովը հայտարարությամբ հանդես եկավ, որում ասված է. «Իրանին ռազմական հարված հասցնելը անթույլատրելի է»: Այդուհանդերձ Ռուսաստանում գործող Եվրասիական միջազգային շարժման ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Դուգինը այս կապակցությամբ նկատել է. «Ոչ մեկին չի հետաքրքրում՝ Պուտինը ցանկանո՞ւմ է պատերազմել, թե՞ ոչ, նրան ուղղակի կարող են պարտադրել: Վերջին հաշվով Հիսլերը նույնպես չհարցրեց Ստալինին, թե ցանկանո՞ւմ է արդյոք վերջինս պատերազմել»:

Դուգինը, այնուամենայնիվ, ընդգծել է, որ ամեն կերպ պետք է կասեցնել Իրանի նկատմամբ հնարավոր պատերազմը, քանի որ «կյանքից կզրկի տարածաշրջանի բոլոր երկրներին»: Մնում է միայն ենթադրել, որ Դուգինն ու Էսկինը կամ բոլորովին ծանոթ չեն իրար, կամ համախոհներ չեն, թե չէ ինչպե՞ս կարող է Իրանի հետ բաց ռազմական գործողությունների ժամանակ Ադրբեջանը լուծել ԼՂ հարցը ռազմական ճանապարհով, երբ նույն այդ «իրանյան պատերազմը» կյանքից զրկելու է նաեւ Ադրբեջանին:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Հայաստանը կմասնակցի «Եվրոտեսիլին»

Ինչպես հայտնում է «Եվրոտեսիլ-2012» պատշտոնական կայքը, այս տարի 43 երկիր կմասնակցի «Եվրոտեսիլ» երգի մրցույթին, ներառյալ Հայաստանը: Մասնակից երկրներն են՝ Ալբանիա (RTVSH), Հայաստան (AMPTV), Ավստրիա (ORF), Ադրբեջան (Ictimai), Բելառուս (BTRC), Բելգիա (VRT), Բոսնիա եւ Հերցեգովինա (BHRT), Բուլղարիա (BNT), Խորվաթիա (HRT), Կիպրոս (CyBC), Դանիա (DR), Էստոնիա (ERR), Ֆինլանդիա (YLE), Ֆրանսիա (France TV), Մակեդոնիա (MKRTV), Վրաստան (GTVR), Գերմանիա (NDR /ARD), Հունաստան (ERT), Հունգարիա (MTV), Իսլանդիա (R3V), Իռլանդիա (RTE), Իսրայել (IBA), Իտալիա (RAI), Լատվիա (LTV), Լիտվա (LRT), Մալթա (PBS), Մոլդովա (TRM), Չեռնոգորիա (RTCG), Նիդերլանդներ (TROS), Նորվեգիա (NRK), Պորտուգալիա (RTP), Ռումինիա (TVR), Ռուսաստան (RTR), Սան Մարինո (SMRTV), Սերբիա (RTS), Սլովակիա (STV), Սլովենիա (RTVSLO), Իսպանիա (RTVE), Շվեդիա (SVT), Շվեյցարիա (SRG/ԽՍՀ), Թուրքիա (TRT), Ուկրաինա (ntu), Միացյալ Թագավորություն (BBC): Նշենք, որ այս տարի մրցույթին չի մասնակցի Լեհաստանը:

«Եվրոտեսիլ» երգի մրցույթի գործադիր տնօրեն Ջոն Օլա Սանդն ասել է. «Մենք շատ ուրախ ենք, որ նորից ավելի քան 40 երկիր կմասնակցի Եվրոտեսիլին: Մայիսին կհավաքենք Բաքվում եւ կկազմակերպենք ամենազվարճալի շոուն աշխարհում»:

«**Ազգ**»-ը զանգահարեց Հայաստանի պատվիրության նախագահ Գոհար Գասպարյանին, ճշտելու համար, թե այս տարի ի՞նչ սկզբունքով է ընտրվելու մեր ներկայացուցիչը՝ կընտրի հանրայի՞ն հեռուստատեսությունը, թե՞ հանրությունը. «Նմանատիպ մի շարք հարցեր կան, որոնց մասին կխոսենք ավելի ուշ՝ մամուլի ասուլիսի ժամանակ», ասաց նա:

Ընդգծենք, ըստ «**Ազգ**»-ի ստացած տեղեկության, այս տարի «Եվրոտեսիլ-2012»-ին Հայաստանը կներկայացնի Եվա Ռիվասը, որը նաեւ մասնակցել էր 2010 թ. եւ գրավել 7-րդ հորիզոնականը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

«Ո՞ւր մնացիր, ազերի եղբայր»

1-ին էջից

Միջազգայնագետ, պրոֆ. Մեսութ Ջասինը, ադրբեջանական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը համարելով սխալներով լի, այս հանգամանքը պայմանավորել է Ռուսաստանի հետ հարաբերությունները չփչացնելու նախագահ Ալիեւի մոտեցումով: Մոտավորապես նույն մոտեցումն է դրսեւորել «Սելջուկ» համալսարանի դասախոս Բիլալ Ամգյունը, ասելով. «Ֆրանսիայի հարցում Ադրբեջանը զերծ է մնում հակազդեցությունից, որովհետեւ Իլհամ Ալիեւը վախենում է կորցնել աթոռը: Ալիեւին մտավախություն է պատճառում նաեւ «արաբական գարնան» ազդեցության տարածման հավանականությունը սեփական երկրում: Այդ իսկ պատճառով էլ խուսափում է Թուրքիայի հետ մերձեցումից»:

Ինչ վերաբերում է «Ենի շաֆաքին», ապա այս թերթն էլ օրինագծի հարցում լռությունը բացատրում է Ֆրանսիայի նկատմամբ Մեհրիբան Ալիեւայի ջերմ զգացումով: Ըստ թուրքական թերթի, պարզվել է, որ Մեհրիբան Ալիեւան Ֆրանսիայի անկեղծ բարեկամն է, այդ իսկ պատճառով, չնայած հայամետ օրինագծի ընդունման, չի հրաժարվում Ադրբեջան-Ֆրանսիա միջխորհրդարանական բարեկամության խմբի նախագահի պաշտոնից, ինչը մթագնում է երկու ցեղակից երկրների եղբայրությունն ու շփոթմունք է պատճառում Անկարային:

«Ենի շաֆաքի» բնութագրմամբ՝ Ֆրանսիան, լինելով Մինսկի խմբի համանախագահող երկիր, միշտ անտարբեր է եղել Ադրբեջանի հոգսերին, անտեսել է խոջալուի կոտորածներն ու ադրբեջանցի փախստականներին, ավելին, հոկտեմբերի 6-8-ը Հարավային Կովկաս այցելության ընթացքում նախագահ Նիկոլա Սարկոզին Բաքվում ընդամենը 2 ժամ է մնացել, Երեւանում ծաղկեպսակ է դրել ցեղասպանության հուշարձանին, իսկ Բաքվում նրա մտքով անգամ չի անցել այցելել շեհիդների պուրակ, եւ այս վիրավորանքի համար Անկարան դատապարտել է Ֆրանսիայի նախագահին:

«Ենի շաֆաքը» նաեւ «Դարաբաղում Թուրքիայի անձնազոհությունը մոռանալու համար» աղերախտության մեջ է մեղադրում Ադրբեջանին եւ հիշեցնում. «Անկարան հակադրվելու գնով ԱՄՆ-ին ու Եվրամիությանը, հաշվի էր նստել Ադրբեջանի իղձերի հետ եւ աղբաման էր նետել հայ-թուրքական արձանագրությունները, որոնք Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացում էին նախատեսում: Սակայն Ֆրանսիայում ընդունված հայկական օրինագծի առնչությամբ նա եղբայրական համարժեք վերաբերմունք չտեսավ Իլհամ Ալիեւից»:

Հայտարարություն

Երեւանի քաղաքապետարանը, Ջինասանից ներկրվող նոր ավտոբուսներով մայրաքաղաքի ներքաղաքային ավտոբուսային երթուղիներում աշխատելու համար, աշխատանքի է հրավիրում վարորդական իրավունքի «D» կարգ ունեցող փորձառու վարորդների

Աշխատանքային պայմաններին ծանոթանալու եւ առավել մանրամասն տեղեկությունների համար զանգահարել՝

(010)51–41-98, (010)46-29-71 կամ (010)39–16–53 հեռախոսահամարներով

Երեւանի քաղաքապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը

կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձեւ 1, լրացվում է տեղում).

2) 3x4 չափի 2 լուսանկար.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն 2 օրինակ.

4) աշխատանքային գրքույկի պատճեն կամ քաղվածքը 2 օրինակ.

5) անձնագրի պատճեն 2 օրինակ.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.

7) «Անելիք բանկ» ՓԲԸ-ում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի **11800033791500** հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տեւողությունը 15 օր է՝ 90 ժամյա տեւողությամբ: Վերապատրաստման դասընթացի արժեքը 55.000 Հ�դ դրամ է՝ առանց ճաշի եւ սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետներ:

Դիմումներն ընդունվում են ս.թ. հունվարի 9-ից 27-ը:

Դասընթացները սկսվելու են հունվարի 30-ից եւ ավարտվելու են փետրվարի 13-ին (ներառյալ շաբաթ եւ կիրակի օրերը): Յուրաքանչյուր օր դասընթացները սկսվելու են ժամը 14:00-ից:

Երեւան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ հարկ, 216 սենյակ, ամեն օր՝ ժամը 9:00-16:30-ը: Հարցերի դեպքում զանգահարել՝ 010-59-70-29, կամ գրել հետեւյալ էլ. փոստով՝ intercoop85@mail.ru.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 10-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ԳՊՀ - ԱՊՁԲ - 01/12

Պատվիրատու՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), որը գտնվում է քաղ. Գորիս, Ավանգարդ 2 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կահույքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ԳՊՀ կարիքների համար կահույքի ձեռքբերումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դասական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Պարզեցված ընթացակարգի հրավերը փաստաթղթային տեսքով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին մինչեւ հունվարի 25-ը, ժամը 15:00-ը:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա թղթային ձեւով հրավեր ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին՝ ք.Գորիս, Ավանգարդ 2 հասցեով: Պատվիրատուն պարտավորվում է թղթային ձեւով հրավեր ստանալու պահանջ ներկայացնելու օրվա ընթացքում թղթային հրավերը տրամադրել հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձին:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին՝ ք.Գորիս, Ավանգարդ 2, թիվ 1 մասնաշենք, 1104 սենյակ հասցեով մինչ հունվարի 26-ը, ժամը 15:00-ը դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Մասնակիցների, մասնակցության իրավունքի եւ որակավորման չափանիշների, պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար Պատվիրատուին պետք է ներկայացվեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պայմանների համաձայն պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների բողոքարկման խորհուրդ (Գնումների աջակցման կենտրոն, հասցե՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ), «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Գորիսի պետական համալսարան

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է «Արաֆս» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- 93020 ք.մ. ընդհանուր մակերեսով շենք, 1464,2 գծ.մ. պարիսպ եւ 11,72 հա հողամաս: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Եղվարդի խճուղի 111: Մեկնարկային գինը՝ 1.513.000.000 ՀՀ դրամ:

Աճուրդը՝ հոլանդական եղանակով, «բաց» ընթացակարգով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 30.01.2012 թ.-ին, ժ. 12:00-ին: : Գույքն իրենից ներկայացնում է 1985 թվականի կառույց: Սահմանված է 10.000.000 ՀՀ դրամի չափով նախավճար, որի վճարման վերջնաժամկետն է 26.01.2012թ. ժ. 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում կամ բանկային հաշվին (Ամերիաբանկ ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պատշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդում հաղթող է արձանագրվում ամենաբարձր գին առաջարկած անձը: Ներկայացված լոտին կարող են ծանոթանալ գույքի նշված հասցեում, սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 26.01.2012թ. յուրաքանչյուր օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու, այն անվճար ստանալու եւ այլ լրացուցիչ տեղեկությունների համար այցելել ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 17.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: